ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք. ԵՐԵՎԱՆ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սույն հաշվետվությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Փաստաբանների պալատ) 2025 թվականի (այսուհետ նաև՝ Հաշվետու ժամանակահատված) տարեկան գործունեությունը և ռազմավարության ծրագրի կատարողականը: Հաշվետվությունները բովանդակում են համապարփակ տեղեկատվություն Հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքների, ինչպես նաև դրանց արդյունքների վերաբերյալ:

❖ ԲԱԺԻՆ Ի. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ի. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող մարմին է, որն ունի օրենքով սահմանված հստակ խնդիրներ, որոնց իրագործմանը պետք է ձգտի իր ողջ գործունեության ընթացքում: Կառույցի առջև դրված խնդիրները լավագույնս կատարելու համար անհրաժեշտ է փաստաբանական համայնքի միասնականությունն ու համախմբվածությունը:

Ինստիտուցիոնալ միասնականության բացակայությունը վտանգավոր և կործանարար է փաստաբանության հեղինակության և կարգավիճակի համար:

Հաշվի առնելով փաստաբանական համայնքի միասնականության և համախմբվածության կարևորությունը՝ Փաստաբանների պալատն իր առաջնային խնդիրներից է համարում փաստաբանական ինստիտուտի միասնականության պահպանումն ու ամրապնդումը:

Ինչպես յուրաքանչյուր մասնագիտական համայնքի, այնպես էլ փաստաբանական ինստիտուտի ճիշտ գործունեության և անկախության պահպանման համար կարևոր է ներքին իրավական ակտերի շարունակական զարգացումը և կատարելագործումը: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին ՀՀ փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ:

Մասնավորապես՝

Սեպտեմբերի 13-ին տեղի է ունեցել Փաստաբանների պալատի Ընդհանուր ժողով, այդ թվում՝ ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին հարցով: Քվեարկության արդյունքում **Փաստաբանների պալատի կանոնադրության մեջ կատարվել են փոփոխություններ:**

Փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցին կողմ է քվեարկել **1354 փաստաբան**:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 03.03.2018թ. թիվ 5/3-Լ որոշմամբ հաստատված «Աշխատանքային ներքին կարգապահական կանոնակարգը հաստատելու մասին» որոշման, 13.01.2023թ. թիվ 2/10-Լ որոշմամբ հաստատված «Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կազմակերպելու մասին» կարգի, Այլ պետության փաստաբանի հավատարմագրման կարգի, Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի, 24.12.2024թ. թիվ 20/32-Լ որոշման և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի մի շարք այլ որոշումների մեջ:

Ինստիտուցիոնալ միասնականության պահպանման նպատակով, ինչպես նախկինում, այնպես էլ 2025 թվականին ՀՀ փաստաբանների պալատի նախագահն իրականացրել է մարզային այցեր և հանդես եկել բանախոսություններով:

Փաստաբանների պալատը ՄԱԿ զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի (UNDP) հետ համագործակցությամբ 2025 թվականի օգոստոսի 11-ին և 12-ին աշխատաժողովներ է իրականացրել Սյունիքի և Շիրակի մարզերի փաստաբանների համար, օգոստոսի 18-ին Լոռու մարզի փաստաբանների համար, օգոստոսի 21-ին Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի փաստաբանների համար:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստանյան փաստաբանության արդի խնդիրները և դրանց ազդեցությունը հասարակական կարծիքի ձևավորման համատեքստում, փաստաբանի հաղորդակցության առանձնահատկությունները, կարգապահական վարույթների իրավակիրառ պրակտիկայի զարգացումները և փաստաբանության ոլորտին առնչվող այլ խնդիրներ և առանցքային հարցեր:






➢ ՀԱՐԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ.

2024 թվականի տարեսկզբին շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծով (այսուհետ՝ նաև Նախագիծ) սահմանվում էր փաստաբանական ծառայությունների մատուցումը տեղափոխել ընդհանուր հարկային դաշտ, այսինքն՝ շրջանառության հարկի փոխարեն, փաստաբանական ծառայությունների մատուցման համար նախատեսվում էր գանձել 18% (անհատ ձեռնարկատերերի համար՝ 23%) շահութահարկ և 20% ավելացված արժեքի հարկ: Բացի այդ, Նախագծով նախատեսվում էր հարկել նաև անվճար իրավաբանական օգնությունը: Նախագծի շրջանառության մեջ դրվելու պահից ակնհայտ էր, որ դրա ընդունումը խարխլելու է փաստաբանության իրավապաշտպան առաքելության հիմքերը: Հաշվի առնելով ասվածը և մյուս բոլոր բացասական հետևանքները, որոնք անխուսափելիորեն պետք է առաջանային Նախագծի

ընդունման արդյունքում, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, նշված Նախագծի ընդունումը կանխելու, ինչպես նաև դրա ընդունումից հետո օրենքի սահմանադրականությունը վիճարկելու ուղղությամբ ամենօրյա ռեժիմով շարունակել է իրականացրել բազմաճավալ աշխատանքներ:

2025 թվականի հունվարի 7-ին տեղի է ունեցել փաստաբանների Ակումբի նիստը, որի ընթացքում քննարկվել է հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի առաջացրած խնդիրները:

Փաստաբանների ակումբի նիստի քննարկման արդյունքներով որոշվել է շարունակել անհրաժեշտ գործողությունների իրականացումը հարկային խնդրահարույց կարգավորումների դեմ:

2025 թվականի փետրվարի 3-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել ևս մեկ Ակումբի նիստ: Փաստաբանները հերթական անգամ քննարկել են 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի առաջացրած խնդիրները:

Փաստաբանների ակումբի նիստի քննարկման արդյունքներով որոշվել է՝ 2025 թվականի փետրվարի 10-ին բողոքի ակցիա իրականացնել՝ հրաժարվել Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց՝ պահանջելով ՀՀ կառավարությունից օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալ և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը ՀՀ ազգային ժողով ուղարկելու միջոցով՝ փաստաբանական գործունեություն համարվող ծառայությունների մատուցումը, անվճար (անհատույց) և կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը ազատել ավելացված արժեքի հարկից:

2025 թվականի փետրվարի 10-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել Ընդհանուր ժողով, որի արդյունքում Հարկային օրենսգրքի փաստաբանությանը առնչվող խնդրահարույց նոր կարգավորումները դատապարտող հայտարարության է ընդունվել:

Բացի այդ, Պալատը դիմել է Ազգային Ժողովի պատգամավորներին Օրենքի սահմանադրականությունը վիճարկելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու վերաբերյալ: 2025 թվականին ընդդիմադիր պատգամավորները դիմել են Սահմանադրական դատարան: Նույն թվականի փետրվարի 21-ին դիմումն ընդունվել է վարույթ, սակայն կայացվել է վարույթը կարճելու մասին որոշում:

Այս ողջ ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի պաշտպանի փաստաբանական համայնքը իրավապաշտպան գործունեության դեմ պետության կողմից վարվող կործանարար քաղաքականությունից և դրա հետևանքներից:

Միջազգային գործընկերների հետ յուրաքանչյուր հանդիպման ընթացքում քննարկվել են փաստաբանների հարկային բեռի ավելացման բացասական հետևանքները, անվճար իրավաբանական օգնության հարկման արդյունքում առաջ եկող խնդիրները, հանրային պաշտպանությանն առնչվող խնդիրները, այդ թվում՝ հարկային փոփոխություններով պայմանավորված դիմելիության ավելացման և միաժամանակ հաստիքների կրճատման վերաբերյալ: Ընդգծվել է «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին» կոնվենցիայի ընդունման կարևորությունը:

Միջազգային գործընկերների հետ տարված աշխատանքների արդյունքում՝ **ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի մասին իր զեկույցում** խիստ բացասական գնահատական է տվել Քրեական դատավարության օրենսգրքի և Հարկային օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ, որոնք ծանր ֆինանսական պարտավորություններ սահմանելով մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների և փաստաբանական գրասենյակների կողմից տրամադրվող անվճար իրավաբանական

օգնության վրա, սահմանափակում են նրանց կարողությունը՝ դատական գործընթացներում հանդես գալու տուժողների անունից:

2025 թվականի նոյեմբերի 4-ին Եվրոպայի փաստաբանների և իրավաբանական միությունների խորհուրդը (CCBE)-ն, ի պատասխան Պալատի դիմումի, դիմելով ՀՀ Կառավարությանն, անընդունելի է համարել ՀՀ-ում փաստաբանների աշխատանքի վրա ազդող օրենսդրական փոփոխությունների ընդունումը՝ առանց Փաստաբանների պալատի հետ բովանդակալից խորհրդակցությունների և կոչ է արել ՀՀ իրավասու մարմիններին ապահովել Փաստաբանների պալատի լիարժեք ներգրավվածությունը փաստաբանների մասնագիտական գործունեությանը անմիջականորեն ազդող ցանկացած օրենսդրական նախաձեռնությանը, այդ թվում՝ հարկային փոփոխություններին վերաբերող, նրանց մտահոգությունները լուծելու և անհրաժեշտության դեպքում վերանայումներ կատարելու համար:

➢ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ.

2025 թվականը կարևոր էր Պալատի ներքին կառավարման ձևավորման տեսանկյունից:

Տարեսկզբին՝ փետրվարի 10-ին, տեղի է ունեցել Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը, որի օրակարգում ընդգրկված հարցերից էր Փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրությունը:

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունների՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող 2811 փաստաբանից, քվեաթերթիկ են ստացել 1550 փաստաբան (55.14%):

2025 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի է ունեցել Փաստաբանների պալատի Ընդհանուր ժողով, որի օրակարգային հարցերից էր Փաստաբանների պալատի նախագահի ընտրության հարցը:

Ընդհանուր ժողովին մասնակցել է 1411 փաստաբան:

Քվեարկության արդյունքում Սիմոն Բաբայանը վերընտրվել է փաստաբանների պալատի նախագահի պաշտոնում:

Սիմոն Բաբայանի թեկնածությանը կողմ է քվեարկել 1383 փաստաբան՝ քվեարկությանը մասնակցած փաստաբանների 98%-ը:














2025 թվականի ընթացքում սահմանված կարգով փոփոխություններ են կատարվել նաև Փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կազմում: Երեք և ավելի տարվա փաստաբանական ստաժ ունեցող խորհրդի անդամներին տարեսկզբին փոխարինել են 2024 թվականի ընթացքում արտոնագիր ստացած փաստաբանները: Բացի այդ, 2025 թվականի մարտի 25-ին Փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամ Արև Հարությունյանը նշանակվել է խորհրդի նախագահ:

➢ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2025 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Փաստաբանների պալատում (այդ թվում՝ Հանրային պաշտպանի գրասենյակում) աշխատել է **138 անձ**, որից՝


1. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմում՝ 35 աշխատող[1].
2. Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակազմում՝ 5 աշխատող.
3. Հանրային պաշտպան՝ Երևան քաղաքում և մարզերում՝ 98 աշխատող (այդ թվում՝ ոչ լրիվ դրույքաչափերով աշխատող հանրային պաշտպանները):



[1] ՀՀ փաստաբանների պալատի 35 հաստիքներից 9-ի աշխատավարձի դրույքաչափի 50%-ը վճարվում է պետական բյուջեի մասին համապատասխան օրենքով Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացված գումարից, քանի որ այդ հաստիքների գործառույթներն ուղղված են նաև Հանրային պաշտպանի գրասենյակի սպասարկմանը:

❖ 2025 թվականին գործող փաստաբանների թիվը

2025 թվականի դեկտեմբերի դրությամբ գործող փաստաբանների թիվը կազմել է **3010 փաստաբան**, որից 1349-ը՝ կին փաստաբան (45%), իսկ 1661-ը՝ տղամարդ փաստաբան (55%):



Կասեցված արտոնագրով փաստաբանների թիվը կազմել է **644 փաստաբան**:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար նախապես կազմվում և Փաստաբանների պալատի խորհրդի հաստատմանն է ներկայացվում համապատասխան տարվա տարեկան բյուջեն, որտեղ առանձին հոդվածներով արտացոլված են տվյալ տարվա համար կանխատեսվող դրամական մուտքերը (եկամուտները) և հնարավոր ծախսային ուղղությունները:

Յուրաքանչյուր տարի Փաստաբանների պալատի նախագահի կողմից Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանն է ներկայացվում տարեկան բյուջեի կատարողական հաշվետվությունը:

2017 թվականից սկսած Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը ներկայացվում է առավել մանրամասն հաշվետվություն, որտեղ արտացոլված են Փաստաբանների պալատի հաշվետու տարվա եկամուտների (մուտքերի) վերլուծությունը, ծախսերի ընդհանուր վերլուծությունը, ինչպես նաև հաշվետու տարվա ծախսերի վերլուծությունն՝ ըստ տարեկան բյուջեով նախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկությունն ապահովվում է Պալատի կայքում առկա «Հաշվետվություններ» բաժնում *(որը տեսանելի է միայն փաստաբանների համար)* Փաստաբանների պալատի ֆինանսական հաշվետվությունները հրապարակելով, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր փաստաբանի ծանոթանալու Փաստաբանների պալատի ֆինանսական շարժին:

Վերը նշված գործողություններն իրականացվել են նաև 2025 թվականին:

II. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳԱՂՏՆԱԼՍՄԱՆ) ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների իրավունքներն ու մասնագիտական գործունեությունը բոլոր տեսակի (հատկապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների) սպառնալիքներից, խոչընդոտներից և ցանկացած տեսակի այլ հակաիրավական միջամտությունից (ոտնձգությունից) պաշտպանելու համար շարունակել

է իր ակտիվ գործունեությունն իրականացնել Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ սույն բաժնում՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի գործունեության արդյունավետության առանցքում է հանձնաժողովի աշխատանքների հանրայնացումը՝ փաստաբանների իրավունքների իրականացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը, տարածումը և քննարկումների կազմակերպումը: Առանձին դեպքերում հանձնաժողովը, քննարկելով փաստաբանների ներկայացրած տեղեկություններն իրենց մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու փորձերի վերաբերյալ, դիմել է իրավասու մարմիններին այդ դեպքերը քննարկման առարկա դարձնելու միջնորդություններով:

Փաստաբանների պալատում Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովից բացի՝ շարունակել է գործել նաև արագ արձագանքման հանձնախումբը, որի նպատակն է փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացման խոչընդոտման դեպքերի, փաստաբանի նկատմամբ այլ անօրինական գործողությունների արձանագրումը, ինչպես նաև փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանների լիազորությունների իրականացման խոչընդոտները վերացնելուն նպաստելը: Արագ արձագանքման հանձնախումբն իր գործիքակազմում հաճախակի օգտվում է տարբեր պետական մարմինների հետ ձևավորված կապի խողովակներից, որոնք արդյունավետ միջոց են խնդիրների օպերատիվ լուծման հարցում: Ըստ անհրաժեշտության՝ տեղում խնդրահարույց իրավիճակներն արձանագրելու համար հանձնախումբ կատարում նաև այցեր: Այդ արձանագրումները հետագայում ոչ միայն օգտագործվում են փաստաբանների կողմից իրենց և իրենց վստահորդների իրավունքների խախտումների փաստերը հիմնավորելու համար, այլև համապատասխան հարթակներում բարձրաձայնվում են իրավասու մարմինների պատասխանատու պաշտոնատար անձանց առջև:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՀԱՍՏԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Հաշվի առնելով 2025 թվականի հոկտեմբերի 16-ին տեղեկատվության հրապարակային աղբյուրներում առկա տվյալները Հանձնաժողովը 2025թ. հոկտեմբերի 18-ին քննարկել է Փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման և կալանավորման հարցը:

Հարցը Հանձնաժողովը քննարկել է փաստաբանի անկախության և փաստաբանական գաղտնիքի անձեռնմխելիության համատեքստում:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովը խստագույնս դատապարտել է արտահայտված խոսքի կապակցությամբ փաստաբանի նկատմամբ իրականացվող ցանկացած հետապնդում, առավել ևս՝ իրավունքների սահմանափակման այնպիսի բացառիկ միջոցի կիրառում, ինչպիսին կալանավորումն է, և պահանջել է քրեական վարույթն իրականացնող մարմնին զերծ մնալ փաստաբանական գաղտնիքի նկատմամբ ոտնձգություն ենթադրող ցանկացած գործողությունից, այդ թվում՝ Փաստաբանի հեռախոսի և դյուրակիր համակարգչի պարունակությունը բացահայտելուն ուղղված որևէ դատավարական գործողություն կատարելուց, և վերադարձնել դրանք, ինչպես նաև իրավասու մարմիններից պահանջել է քննության ենթարկել Փաստաբանին վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու գործողության ժամանակ անհամաչափ ուժի կիրառման վերաբերյալ տեղեկությունները և իշխանազանցություն թույլ տված պաշտոնատար անձանց ենթարկել համարժեք պատասխանատվության:

2025 թվականի հոկտեմբերի 20-ին Փաստաբանների պալատում նշված դեպքով տեղի է ունեցել քննարկում:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը տեղեկացրել է Փաստաբանի պաշտպանության ուղղությամբ կատարված գործողությունների վերաբերյալ:

Հանդիպմանը մասնակցել են նաև փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի ներկայացուցիչները:

Ներկա փաստաբանները հայտնել են իրենց վրդովմունքը՝ Փաստաբանի բիրտ ձերբակալության, քրեական հետապնդման և կիրառված խափանման միջոցի կապակցությամբ:

Միաժամանակ, Փաստաբանի պաշտպանական թիմի հետ քննարկվել են վերջինիս պաշտպանությանն ուղղված գործողությունների շրջանակը և հետագա քայլերը:

Հանձնաժողովը 2025 թվականի հոկտեմբերի 22-ին քննարկել է մեկ այլ փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման և հարկադրանքի միջոցների հարցը:

Հարցը Հանձնաժողովը քննարկել է փաստաբանի անկախության և մասնագիտական հեղինակության համատեքստում:

Ինչպես նախկինում, այնպես էլ այս դեպքում Հանձնաժողովը միարժեքորեն ամրագրել է, որ դատապարտում է փաստաբանի նկատմամբ իրականացվող որևէ հետապնդում, առավել ևս՝ քրեական, որը կարող է պայմանավորված լինել վերջինիս կողմից իրականացվող օրինական մասնագիտական գործունեությամբ: Հիշեցրել է, որ փաստաբանի անկախությունը վերջինիս մասնագիտական գործունեության առանցքային հիմքերից է: Այն անհրաժեշտ նախապայման է ժողովրդավարական հասարակության մեջ երաշխավորելու անձանց իրավունքների պաշտպանությունը:

Հանձնաժողովը պահանջել է իրավասու մարմիններին մանրամասն քննության ենթարկել Ռուբեն Մխիթարյանի և նրա պաշտպանների հաղորդումները փաստաբանի մասնագիտական գործունեության և իրավաբանական օգնություն տրամադրելու շրջանակներում ձերբակալվելու մասին:

Հանձնաժողովը նաև հորդորել է համապատասխան պետական մարմիններին և պաշտոնատար անձանց ձեռնպահ մնալ փաստաբանական գործունեության անկախությունը, մասնագիտական գործունեության ազատությունը վտանգող և փաստաբանի մասնագիտության հեղինակությունն խաթարող հետագա գործողություններից:

2023 թվականի հոկտեմբերի 23-ին Խորհուրդը վերը նշված երկու դեպքերը դատապարտող որոշում է կայացրել:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

- 2025 թվականի փետրվարի 24-ին ՀՀ փաստաբանների պալատ է դիմել Պալատի անդամ հանդիսացող Փաստաբան և տեղեկացրել վարույթն իրականացնող մարմնի կողմից իր վստահորդի հետ քննչական գործողության իրականացմանը մասնակցելուն խոչընդոտելու մասին: Արագ արձագանքման հանձնախմբի միջամտությամբ հնարավոր է եղել ուղղել իրավիճակը և Փաստաբանը կարողացել է մասնակցել քննչական գործողությանը:

- 2025 թվականի մայիսի 30-ին փաստաբանական գրասենյակը դիմել է Փաստաբանների պալատ տեղեկացնելով, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացվող քրեական վարույթով 2025 թվականի մայիսի 27-ին խուզարկություն է կատարվել իրենց աշխատավայրերում, որի արդյունքում առգրավվել են փաստաբանների աշխատանքային համակարգիչները:

Հրատապ կարգով նշված հարցը քննարկվել է Փաստաբաններ իրավունքների պաշտպանության հանձնաժողովի կողմից: Փաստաբանների աշխատանքային փաստաթղթերի խուզարկության և համակարգիչների առգրավման հարցը Հանձնաժողովը քննարկել է փաստաբանական գաղտնիքի անձեռնմխելիության և դրա պաշտպանության երաշխիքների, ինչպես նաև փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության համատեքստում: Հանձնաժողովը հորդորել է քրեական վարույթն իրականացնող մարմնին զերծ մնալ փաստաբանական գաղտնիքի նկատմամբ ոտնձգություն ենթադրող ցանկացած գործողությունից, այդ թվում՝ համակարգիչների պարունակությունը բացահայտելուն ուղղված որևէ դատավարական գործողություն կատարելուց, և վերադարձնել դրանք:

Նշվածի առնչությամբ Պալատը դիմել է միջազգային գործընկերներին, այդ թվում՝ Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդին, վերջիններիս ուշադրությունը հրավիրելով նշված փաստաբանական գրասենյակում կատարված խուզարկության դեպքին:

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը (CCBE) պաշտոնական գրությամբ դիմել է ՀՀ վարչապետին նշված փաստաբանական գրասենյակում կատարված խուզարկության և առգրավման դեպքի կապակցությամբ՝ իր մտահոգությունը հայտնելով Հայաստանում փաստաբանների մասնագիտական իրավունքների խախտումների մասին հաղորդումների առնչությամբ:

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը կոչ է արել Հայաստանի իշխանություններին ապահովել փաստաբանի գաղտնիքը խախտող բոլոր գործողությունների անհապաղ դադարեցումը, բոլոր առգրավված նյութերի անհապաղ վերադարձը, փաստաբանների անվտանգ և անկախ մասնագիտական գործունեության իրականացումը՝ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները:

CCBE-ն նաև հիշեցրել է, որ բոլոր փաստաբանները պետք է կարողանան կատարել իրենց մասնագիտական պարտականությունները՝ առանց վախենալու հաշվեհարդարից, խոչընդոտներից, սպառնալիքներից կամ հետապնդումներից՝ արդարադատության իրականացման անկախությունն ու ամբողջականությունը և օրենքի գերակայությունը պահպանելու համար:

Ձեռնարկված միջոցները տվել են ցանկալի արդյունք. Հակակոռուպցիոն կոմիտեն վերադարձրել է փաստաբանական գրասենյակից վերցված (առգրավված) բոլոր համակարգիչները:

- 2025 թվականի հուլիսի 10-ին մի խումբ փաստաբաններ դիմել են Պալատ տեղեկացնելով, որ նույն օրը, ժամը 09:00-ի սահմաններում, ժամանել են ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն՝ պաշտպանելու, ըստ ՀՀ քննչական կոմիտեի հայտարարության, ահաբեկչության նախապատրաստության փաստով

ձերբակալված իրենց վստահորդների իրավունքները և պատշաճ կարգով ներգրավվելու քրեական վարույթում, սակայն շուրջ երեք ու կես ժամ փաստաբաններին արգելվել է մուտք գործել քննչական մարմնի վարչական շենք, անգամ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչների ժամանելու պայմաններում: Փաստաբանների ներկայացրած հանգամանքները հրատապ կարգով քննարկվել են Փաստաբաններ իրավունքների պաշտպանության հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը քննարկման արդյունքում հրապարակել է հայտարարություն, որով հորդորել է քրեական վարույթն իրականացնող մարմնին ձեռնպահ մնալ փաստաբանների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելուց, իսկ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահից Հանձնաժողովը պահանջել է հանձնարարել նախաձեռնել քրեական վարույթ՝ փաստաբանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելու փաստի առթիվ և մեղավոր պաշտոնատար անձանց կանչել պատասխանատվության:

- 2025 թվականի հուլիսի 18-ին հանրային պաշտպան հանդիսացող փաստաբանը դիմել է ՀՀ փաստաբանների պալատ, տեղեկացնելով, որ 19.05.2025 թվականին ՀՀ հակառուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ/0250/01/24 քրեական գործով դատական նիստի ընթացքում, որտեղ ինքը հանդիսացել է ամբաստանյալի պաշտպան, նախագահող դատավորը պահանջել է իրենից գլխից հանել արևային ակնոցը: Դրան ի պատասխան պաշտպանը հայտնել է, որ ակնոցը հանդիսանում է հարդարանքի մաս և հրաժարվել է այն հանել: Նշվածի արդյունքում նախագահող դատավորը պաշտպանի նկատմամբ կիրառել է դատավարական սանկցիա՝ նկատողություն /երկու անգամ/ և վարույթից հեռացում:

Հարցը քննարկվել է Հանձնաժողովի կողմից: Քննարկման արդյունքում հրապարակված հայտարարությամբ Հանձնաժողովը դատապարտել է փաստաբանների հանդեպ օրինական, ողջամիտ և համաչափ հիմքերի բացակայության պայմաններում պատասխանատվության միջոցների, առավել ևս՝ վարույթից հեռացնելու տեսքով դատական սանկցիայի կիրառումը, որը հանգեցնում է անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացման սահմանափակման և հորդորել է

դատարաններին և այլ պետական մարմիններին ձեռնպահ մնալ փաստաբանների մասնագիտական օրինական գործունեությանը անհարկի միջամտություններից:

- 2025 թվականի օգոստոսի 18-ին նույն հարցով Փաստաբանների պալատ է դիմել մեկ այլ հանրային պաշտպան, որը նույն գործով մեղադրյալի շահերի պաշտպանությունը ստանձնել էր նախորդ հանրային պաշտպանի վարույթից հեռացվելուց հետո:

Վերջինիս ևս դատավորը ներկայացրել էր նույն պահանջը և կիրառել դատական սանկցիա, այս անգամ՝ դատական տուգանք:

Հանձնաժողովը, քննարկելով նշված հարցը և վերահաստատելով իր դիրքորոշումը, հորդորել է դատարաններին և այլ պետական մարմիններին ձեռնպահ մնալ փաստաբանների մասնագիտական օրինական գործունեությանը անհարկի միջամտություններից:

- Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում քննարկելով մի շարք դիմումներ, գրություններ է հասցեագրել պատկան մարմիններին, փաստաբանների բարձրացրած խնդիրների լուծմանն օժանդակելու նպատակով, մասնավորապես օրինակ՝ փաստաբանին հարցաքննելուց ձեռնպահ մնալու հարցով և այլն:

- Փաստաբանների պալատի խորհուրդը քննարկել է 2025թ. հոկտեմբերի 15-ին զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական մեդիայում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմի հոգևորականների բերման ենթարկելու վերաբերյալ հրապարակումները, ինչպես նաև փաստաբաններից ստացված տեղեկություններն այն մասին, որ Քննչական կոմիտեի Երևանի քննչական վարչության շենքը շրջապատվել է ոստիկանության ծառայողներով, որոնք փաստացի թույլ չեն տվել փաստաբաններին, որոնք ժամանել են բերման ենթարկվածներին իրավաբանական օգնություն տրամադրելու համար, մուտք գործել շենք: Խորհուրդը կայացրել է որոշում, որով խստորեն դատապարտել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու

Արագածոտնի թեմի հոգևորականներին և այլ անձանց իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով վարույթն իրականացնող մարմին ժամանած փաստաբանների մուտքի և վստահորդների հետ տեսակցելու խոչընդոտման փաստը:

Նախորդ տարիներին փաստաբանների նկատմամբ գործադրված բռնության առնչությամբ ՄԱԿ խոշտանգումների դեմ կոմիտեի զեկույցը.

2025 թվականին **ՄԱԿ խոշտանգումների դեմ կոմիտեն հրապարակել է Հայաստանի վերաբերյալ զեկույց, որում գնահատվում է** Հայաստանում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեմ պայքարի և հիմնարար իրավական երաշխիքների ապահովման վիճակը: Կոմիտեն մասնավորապես արձանագրել է, որ Հայաստանը պետք է երաշխավորի փաստաբանների անկախությունը, այդ թվում՝ ապահովելով, ներքին օրենսդրության լիովին համապատասխանեցումը Փաստաբանների դերի վերաբերյալ հիմնական սկզբունքներին (Հավանայի սկզբունքներ) և այլ համապատասխան միջազգային չափանիշներին, ինչպես նաև անհապաղ հետաքննելով և քրեական հետապնդում իրականացնելով փաստաբանների նկատմամբ ոտնձգությունների բոլոր դեպքերի համար: Զեկույցում նշվում է, որ Հայաստանը պետք է ապահովի, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ բոլոր բողոքները անհապաղ և անաչառորեն քննվեն անկախ մարմնի կողմից, որ անմիջապես կասեցվի կասկածյալ պաշտոնյաների աշխատանքը քննության ողջ ընթացքում:

III. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ, ՈՉ ՖՈՐՄԱԼ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական գործունեություն իրականացնելիս իրավունքների պաշտպանության շրջանակներում փաստաբաններն առնչվում են տարբեր իրավակիրառ մարմինների, այդ թվում՝ դատական համակարգում դրական և բացասական երևույթների հետ: Նշվածով

պայմանավորված՝ ձևավորվում է նաև մասնագիտական կարծիք այդ մարմինների աշխատանքի արդյունավետության վերաբերյալ:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2014 թվականի թիվ 17 կարծիքում նշվել է, որ գնահատումն առանցքային նշանակություն ունի արդարադատության որակի բարձրացման համատեքստում:

Վերոգրյալով պայմանավորված՝ Փաստաբանների պալատը որպես փաստաբանական համայնքը համախմբող կառույց՝ որոշում է կայացրել ձեռնարկել միջոցներ ստեղծելու համար իրավակիրառ մարմինների, այդ թվում՝ դատավորների, դատախազների, քննիչների և մի շարք այլ պաշտոնատար անձանց միջազգային չափորոշիչների վրա հիմնված, ոչ ֆորմալ, օբյեկտիվ գնահատման համակարգ, որը կնպաստի պետական կառույցների աշխատանքի որակի և արդյունավետության մակարդակի բարձրացմանն ու այդ մարմիններում բացասական տարատեսակ երևույթների նվազմանը, որպես արդյունք՝ բարելավի արդարադատության համակարգը:

Քննարկումների, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում 2025 թվականին իրականացվել են նշված գնահատման համակարգի հնարավոր մոդելների համադրման և վերլուծության աշխատանքներ՝ հաշվի առնելով գնահատման համակարգի ներդրման նպատակները, կիրառման հնարավոր շրջանակը, գնահատման չափանիշների հստակությունը, օբյեկտիվության և թափանցիկության ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև առկա իրավական և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա նախանշվել են գնահատման համակարգի հնարավոր կառուցվածքային և գործառնական լուծումները, այդ թվում՝ գնահատման չափանիշների ձևավորման և վերահսկողության հնարավոր մեխանիզմները:

Փաստաբանների պալատը կարևորում է արդարադատության համակարգի բարելավմանն ուղղված միջոցների կենսագործումը: Հաշվի առնելով կատարված ծավալուն ուսումնասիրությունների արդյունքները, որոնք վկայում են այն մասին, որ այս

համակարգի ներդրումը զգալիորեն նպաստում է արդարադատության արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Փաստաբանների պալատը վճռական է շարունակել նշված ուղղությամբ աշխատանքների իրականացումը և Հայաստանի Հանրապետությունում ներդնել անկախ մասնագիտական կարծիքի արտահայտման այս կարևոր հարթակը:

IV. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԴԵՐԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստաբանների պալատը մշտապես տարաբնույթ նախաձեռնություններ և միջոցառումներ է իրականացրել, որոնք նպաստել են հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել հետևյալ միջոցառումները.

➢ «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ 2025»

Կանանց միջազգային օրվան ընդառաջ, ձևավորված ավանդույթի համաձայն, Փաստաբանների պալատը Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարել է կանանց իրավունքների պաշտպանությանը նվիրված միջոցառումների իրականացման մասին:

Միջոցառման շրջանակներում 2025 թվականի մարտի 10-ից մինչև 14-ը փաստաբանները և Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներն անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել կանանց:

Նախաձեռնության գլխավոր նպատակն էր խթանել կանանց իրավունքների պաշտպանությունը Հայաստանում, ինչպես նաև բարձրացնել հանրային իրավագիտակցությունը և փաստաբանին դիմելու իրավական մշակույթը:

Միջոցառմանը միացել են բազմաթիվ փաստաբաններ, ինչպես նաև Փաստաբանական ակադեմիան:



➢ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

- 2025 թվականի ապրիլի 24-ին, Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և Փաստաբանների պալատի անդամները, Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը, Ակադեմիայի ներկայացուցիչները և ունկնդիրները, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը և գրասենյակի ներկայացուցիչները միջազգային գործընկերների՝ Ֆրանսիայի, Բուլղարիայի, Լիբանանի և Վրաստանի Փաստաբանական միությունների պատվիրակությունների անդամների հետ այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղիկներ խոնարհել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ, եղել Հայոց ցեղասպանության պատմության թանգարանում:



- Ամենամյա ավանդույթի համաձայն՝ կատարվել են փաստաբանների զոհված երեխաների հիշատակի միջոցառումներ, այցելությունների շիրիմներին, հիշատակին նվիրված պուրակ:

- 2025 թվականին ևս Փաստաբանների պալատը իրականացրել է Երևանում **«Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատանն** աջակցության նախաձեռնությունը:

Նախաձեռնության շրջանակներում 2025 թվականի դեկտեմբերի 23-ին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, Փաստաբանների պալատի աշխատակազմը, Փաստաբանական ակադեմիայի աշխատակազմը, փաստաբաններ և քաղաքացիներ այցելել են մանկատուն և մանկատան երեխաների համար փոխանցել անհրաժեշտ պարագաները:



➢ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ 107-ՐԴ ԱՄՅԱԿԸ.

2025 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի է ունեցել Փաստաբանության 107-րդ ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումը:



Միջոցառման բացմանը ողջույնի խոսքով հանդես են եկել Փաստաբանների պալատի նախագահն ու Փաստաբանական ակադեմիայի ռեկտորը:

Ելույթներում շեշտվել է փաստաբանի մասնագիտության բարձր առաքելությունը, արդարադատության համակարգում փաստաբանի դերն ու պատասխանատվությունը, ինչպես նաև փաստաբանության ստեղծման ու զարգացման պատմությունը:

Ելույթով հանդես են եկել նաև ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Առաքելյանը և ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր, փաստաբան Արմեն Հայկյանցը:

Փաստաբանության ստեղծման 107-ամյա հոբելյանի առթիվ ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանը Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանին շնորհել է «Համագործակցության համար» մեդալ:

Միջոցառման ընթացքում իրենց աշխատանքով փաստաբանական համայնքի զարգացմանը նպաստելու համար մի շարք գործընկերներ Փաստաբանների պալատի նախագահի կողմից պարգևատրվեցին պատվոգրերով և շնորհակալագրերով:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի կողմից, որը նաև «Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» ուսումնական ձեռնարկի համահեղինակ է, Փաստաբանական համայնքի գիտական ներուժի զարգացմանը նպաստելու, «Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» գիտաուսումնական ձեռնարկի հեղինակային աշխատանքները գիտական բարձր մակարդակով իրականացնելու համար պատվոգրի են արժանացել գրքի մյուս հեղինակները:

Փաստաբանության 107-րդ ամյակին նվիրված միջոցառման երկրորդ մասում հանդիսավոր արարողությամբ **Փաստաբանական ակադեմիայի 146 շրջանավարտների հանձնվել են արտոնագրեր**:

V. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՉԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական ծառայությունների մատուցման շուկայում իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց համաձայն առկա է փաստաբանների զբաղվածությանն աջակցելու անհրաժեշտություն՝ հատկապես երիտասարդ և մարզաբնակ փաստաբանների շրջանում: Նշված ուղղությամբ Փաստաբանների պալատը ձեռնարկել է հետևյալ միջոցները՝

- Փաստաբանների պալատը ձեռնամուխ է եղել ստեղծել փաստաբանական ծառայությունների պահանջարկ ունեցող տնտեսվարողների էլեկտրոնային հարթակ, ինչպես նաև փաստաբանի աշխատուժի պահանջարկ ունեցող փաստաբանական գրասենյակների հարթակ:

Նախաձեռնվել է ստեղծել Փաստաբանների պալատի նոր կայքէջ, որը պետք է ներառի նոր գործիքակազմեր: Այս ուղղությամբ 2025 թվականին Փաստաբանների պալատը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համատեղ կազմել է տեխնիկական պայմաններն ու առաջադրանքը: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից հայտարարվել է մրցույթ, որի արդյունքներով ընտրվել է կազմակերպությունը, որը պետք է իրականացնի նշված աշխատանքները:

- Երիտասարդական խորհուրդը հավաքագրել և երիտասարդ փաստաբաններին է փոխանցել թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ:

- Փաստաբանների զբաղվածությունը խթանելու և հանրային պաշտպանների թափուր հաստիքները համալրելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը հայտարարել և անցկացվել է մրցույթ:

- Երիտասարդ փաստաբաններին տրամադրվել է Փաստաբանների պալատում գտնվող աշխատասենյակից անվճար օգտվելու հնարավորություն:

VI. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում Փաստաբանների պալատի ներկայացուցիչները տարբեր պետական մարմինների, ինչպես նաև միջազգային կառույցների և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների, քննարկումների և աշխատանքային շփումների շրջանակներում հետևողականորեն բարձրացրել են հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության, աշխատանքի արդյունավետ կազմակերպման և Հանրային պաշտպանի գրասենյակի (ՀՊԳ) գործունեությանն առնչվող համակարգային խնդիրների առկայության հարցը:

Մասնավորապես, համապատասխան շահագրգիռ կողմերի ուշադրությունն է հրավիրվել հանրային պաշտպանների աշխատանքային ծանրաբեռնվածության, ինչպես

նաև հանրային պաշտպանության ծառայության պատշաճ և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման անհրաժեշտության վրա: Նշված հարցերի բարձրացման նպատակն է եղել նպաստել առկա խնդիրների համակողմանի գնահատմանը, դրանց լուծման ուղղությամբ համապատասխան քայլերի ձեռնարկմանը և հանրային պաշտպանության համակարգի շարունակական բարելավմանը:

2025 թվականի ապրիլի 21-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից կազմակերպված «Արդարադատությունը որպես արդարության հասնելու գործիք» խորագրով համաժողովի ընթացքում, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Արթուր Աթաբեկյանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանը, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը և ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը, Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանն իր ելույթում բարձրացրել է վերը նշված հարցերը, ընդգծելով դրանց կարևորությունն ու լուծման հրատապությունը:

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.

Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակը *(այսուհետ նաև՝ Գրասենյակ),* չնայած գործերի աննախադեպ աճի պայմաններին, 2025 թվականին ևս շարունակել է անխափան ապահովել «Փաստաբանության մասին» օրենքի *(այսուհետ նաև՝ Օրենք)* 41-րդ հոդվածով նախատեսված՝ անձանց անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

Գրասենյակի գործունեության առաջնային խնդիրը շարունակել է մնալ հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածությունը, որին գումարվել է որակյալ կադրերի արտահոսքը՝ պայմանավորված պետական և մասնավոր հատվածներում վարձատրության

զգալի տարբերությամբ: 2024 թվականի երկրորդ կիսամյակում Գրասենյակին հատկացված 15 նոր հաստիքները 2025 թվականին կրճատվել են՝ ընդհանուր հաստիքների թիվը հասցնելով 73-ի: Դրանցից 59-ը նախատեսվել է քրեական, իսկ 14-ը՝ քաղաքացիական գործերի սպասարկման համար: Նշված հաստիքների կրճատմամբ հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունն ավելացել է:

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը մեղմելու համար՝ նշված հարցը մշտապես ներկայացվել է իրավասու պետական մարմիններին, դրան զուգահեռ ներկայացվել է նաև միջազգային կազմակերպություններին՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով օժանդակ գործիքներով առկա իրավիճակը մեղմելու համար:

Գրասենյակի գործերի քանակի աճին նպաստել են մի շարք գործոններ, որոնցից են՝

- *քրեական վարույթներով մի շարք գործողություններին պաշտպանի պարտադիր ներգրավման անհրաժեշտությունը,*
- *հանցագործությունների թվի, հետևապես և/կամ վարույթն իրականացնող մարմինների կողմից քննված քրեական գործերի աճը,*
- *օրենսդրական լրացումների արդյունքում Գրասենյակի շահառուների ցանկի համալրումը,*
- *2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված փախստականների բազմաբնույթ խնդիրները,*
- *ապաստան հայցողների զգալի աճը,*
- *Գրասենյակի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածությունը և հանրության իրավագիտակցության բարձրացումը,*
- *հանրային պաշտպանների մասնագիտական պատրաստվածության բարելավումն ու Գրասենյակի նկատմամբ վստահության աճը:*

Հարկ է ընդգծել նաև, որ Գրասենյակի ծանրաբեռնվածությունն արտացոլվում է նաև 2025 թվականի ընթացքում Գրասենյակում հաշվառված փաստաթղթաշրջա-նառությամբ, ըստ որի.

- *մուտքագրվել է 47445 դիմում, նախորդ տարվա 42055-ի փոխարեն,*
- *ելքագրվել է 20330 գրություն, նախորդ տարվա 19271-ի փոխարեն:*
- *շրջանառվել է ներքին 4029 գրություն, նախորդ տարվա 3843-ի փոխարեն:*

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ.

Գրասենյակի նստավայրերը տեղեկայված են Երևան քաղաքում և 22 խոշոր քաղաքային բնակավայրերում, որոնք սպասարկում են հանրապետության ամբողջ տարածքը:

Մարզային նստավայրերի տարածքները հիմնականում վարձակալվում են, որը լրացուցիչ ֆինանսական բեռ է ստեղծում Գրասենյակի համար:

Ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մարզերում, անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետությունն ապահովելու նպատակով, հանրային պաշտպանների հաստիքները տեղաբաշխվել են վարչատարածքային սկզբունքով՝ ըստ մարզերի, ինչպես նաև ըստ մասնագիտացման (քրեաիրավական և քաղաքացիաիրավական), դատարանների նստավայրերի, վարույթն իրականացնող մարմինների, քրեակատարողական հիմնարկների և գործերի քանակի հաշվառմամբ՝ հաշվի առնելով նաև շահերի բախման առաջացման հնարավոր վտանգը:

Հաշվետու տարվա ընթացքում նախատեսված հանրային պաշտպանի 73 հաստիքները բաշխվել են հետևյալ կերպ.

- *Գրասենյակի Երևան քաղաքի նստավայրը սպասարկվել է 35 հանրային պաշտպանի կողմից, որից 27-ը՝ քրեաիրավական մասնագիտացմամբ, իսկ 8-ը՝ քաղաքացիաիրավական,*
- *38 հաստիքները բաշխվել են Գրասենյակի մարզային նստավայրերի միջև:*

Հանրային պաշտպանների հաստիքներն ինչպես տարեսկզբին, այնպես էլ տարվա ընթացքում վերաբաշխվել են ըստ անհրաժեշտության՝ հաշվի առնելով գործերի քանակական, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինների նստավայրերի

փոփոխությունները:

Կախված համապատասխան մարզում և/կամ մարզի քաղաքում անվճար իրավաբանական օգնության պահանջարկից՝ նախատեսվել է հանրային պաշտպանի ոչ միայն լրիվ (ամբողջական), այլ նաև 0,5 և 0,25 դրույքաչափերով հաստիքներ:

Մարզում հանրային պաշտպանի մեկ հաստիքի մասնատումը՝ 0,5, իսկ որոշ դեպքերում նաև՝ 0,25 դրույքների, հնարավորություն է ընձեռել առավել արդյունավետ կառավարել հանրային պաշտպանի աշխատաժամանակը, ինչպես նաև ապահովել անվճար իրավաբանական օգնության տրամադրումը ոչ միայն մարզկենտրոնում, այլ նաև՝ մյուս բնակավայրերում:

Հարկ է նկատել, որ հանրային պաշտպանների համաչափ ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև հանրային պաշտպանության հասանելիությունը և պատշաճ որակն ապահովելու նպատակով ընթացիկ տարվա ընթացքում որոշակի պարբերականությամբ ևս կատարվում է վարված գործերի քանակի վիճակագրական տվյալների ուսումնասիրություն և էական նշանակություն ունեցող այլ հանգամանքների հաշվառմամբ, անհրաժեշտության դեպքում, ևս կատարվում է հաստիքների վերաբաշխում:

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մարզերում անվճար իրավաբանական օգնության հասանելիությունը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ մարզերը սպասարկող հանրային պաշտպանների հետ կնքվել են՝ նրանց պատկանող ավտոմեքենաները Գրասենյակի կարիքների համար անհատույց օգտագործելու մասին պայմանագրեր: Գրասենյակի կարիքների համար օգտագործելով հանրային պաշտպաններին մասնավոր հիմունքներով պատկանող ավտոմեքենաները՝ Գրասենյակը փաստացի փոխհատուցում է միայն վառելիքի ծախսերը, որոնց հատուցման համար, յուրաքանչյուր առանձին դեպքում, հանրային պաշտպանները ներկայացնում են համապատասխան փաստաթղթային

հիմնավորումներ, որոնք անցնում են ստուգման ընթացակարգով:

Մարզերում իրավաբանական օգնության պատշաճ որակն ապահովելու նպատակով, այդ տարածաշրջանը սպասարկող հանրային պաշտպանները մասնակցել են Փաստաբանների պալատի կողմից իրականացվող վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև՝ մասնակից են դարձվել հանրային պաշտպանների մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով՝ տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ հանրային պաշտպանների համար կազմակերպվող առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ թիրախային դասընթացներին, անձնական կարողությունների զարգացման ծրագրերին և մասնագիտական քննարկումներին:

Տրամադրվող անվճար իրավաբանական օգնության որակի վերահսկողության նպատակով Գրասենյակի ղեկավարը, պարբերաբար այցելել է Գրասենյակի մարզային նստավայրեր:

Գրասենյակի մարզային նստավայրեր այցելություններ է իրականացրել նաև Պալատի նախագահը:

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆ ԴԱՌՆԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ.

2014 թվականից սկսած հանրային պաշտպանների հաստիքների համալրումն հիմնականում իրականացվում է մրցութային կարգով, ինչը նպատակ է հետապնդում, նախ և առաջ, ապահովել հանրային պաշտպան դառնալու գործընթացի թափանցիկությունը և օբյեկտիվ գնահատել հանրային պաշտպանի թեկնածուի մասնագիտական պատրաստվածությունը:

Փաստաբանների պալատի կողմից հաստիքների համալրման մրցութային քաղաքականության որդեգրումը նպատակ է հետապնդում, նախ և առաջ, ապահովել հանրային պաշտպան դառնալու գործընթացի թափանցիկությունը և օբյեկտիվ գնահատել

հանրային պաշտպանի թեկնածուի մասնագիտական պատրաստվածությունը:

Հանրային պաշտպան կարող է նշանակվել հետևյալ կերպ՝

- Մրցույթային կարգով,
- Գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ (առաջարկով):

Հանրային պաշտպանի թափուր հաստիքն արտամրցութային կարգով համալրվում է միայն այն դեպքում, երբ տվյալ հաստիքը մրցութային կարգով անցած թեկնածուներով համալրել հնարավոր չէ, օրինակ՝ երբ ՀՊԳ մարզային գրասենյակում առկա թափուր հաստիքի համալրման համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար որևէ թեկնածու չի դիմել:

Հանրային պաշտպանի հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով: Առանց մրցույթի անցկացման՝ հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը կարող է յուրաքանչյուր անգամ երկարաձգվել ևս մեկ տարով, եթե հանրային պաշտպանը փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և չափանիշներին համապատասխան, հանրային պաշտպանների գործունեության ստուգման և գնահատման արդյունքներով՝ ստացել է համապատասխան անցողիկ միավորներ:

Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթն իրականացվում է երկու փուլով՝

- գրավոր փուլ,
- բանավոր (հարցազրույց) փուլ:

Մրցույթի կազմակերպման և թեկնածուների աշխատանքների գնահատման համար յուրաքանչյուր տարի ստեղծվում է համապատասխան մրցութային հանձնաժողով, որն անցկացնում է մրցույթի ողջ ընթացքը և գնահատում քննական առաջադրանքները:

Մրցույթի առաջադրանքն ընտրվում է թեկնածուների կողմից վիճակահանության միջոցով, իսկ առաջադրանքների գնահատման համար մշակված համակարգը բացառում է գնահատման գործընթացում սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը:

Հաշվետու ժամանակահատվածում առաջացած թափուր հաստիքները ևս համալրվել են նախորդող տարիներին անցկացված մրցույթները հաղթահարած փաստաբաններով, իսկ մրցույթը հաղթահարած փաստաբանների ցուցակից ներգրավելու անհնարինության պայմաններում՝ Գրասենյակի ղեկավարի առաջարկով ներկայացված այլ փաստաբաններով:

2025 թվականի ընթացքում հանրային պաշտպանների թափուր հաստիքները համալրելու նպատակով անցկացված մրցույթին մասնակցել են թվով 11 փաստաբաններ, որոնցից 6-ը քրեաիրավական, իսկ 5-ը քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ: Գրավոր և բանավոր փուլերը հաղթահարած 5 փաստաբանների հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր, իսկ մյուս փաստաբանները գրանցվել են հանրային պաշտպանի թեկնածուների ցուցակում:

Մինչև մրցույթի անցկացումը, հաշվի առնելով հանրային պաշտպանի թեկնածուների ցուցակում հավակնորդների բացակայությունը, Պալատի կողմից հաշվետու տարվա ընթացքում ընդունվել են հայտեր՝ արտամրցութային կարգով թափուր հաստիքները համալրելու նպատակով[2]:

2015 թվականից Փաստաբանների պալատում գործում է հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և արդյունավետության գնահատման համակարգ, որն ապահովվում է Գրասենյակում առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու համար հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչները և գնահատման ընթացակարգը:

Հաշվետու ժամանակահատվածում գործող հանրային պաշտպաններից

[2] Տե՛ս հետևյալ հղումներով.
- https://advocates.am/news/view/4285.html
- https://advocates.am/news/view/4410.html

յուրաքանչյուրի աշխատանքն, ըստ հրահանգով սահմանված միավորների, գնահատվել է ընդհանուր չափորոշիչներով, որոնց շրջանակներում հաշվի են առնվել հանրային պաշտպանի կողմից օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին մասնակցած լինելը, «Փաստաբանության մասին» օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտման համար կարգապահական տույժի ենթարկված չլինելը, աշխատանքային կարգապահության խախտման համար տույժի ենթարկված չլինելը, հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով փաստաբանական վարույթին վերաբերվող պահանջները կատարած լինելը:

Հրահանգով հանրային պաշտպանի աշխատանքը գնահատվում է նաև ըստ հանրային պաշտպանի մասնագիտական ուղղվածության (քրեական ու քաղաքացիական և վարչական) չափորոշիչների:

Քրեական ուղղվածության հանրային պաշտպանների աշխատանքը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի արդարացումների (լրիվ կամ մասնակի), ինչպես նաև արդարացնող և ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցված լինելու, կարճված վարույթների թիվը, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերը, ավելի մեղմ հոդվածով կամ հոդվածի մասով վերաորակումները, սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժի նշանակումները, օրինակ՝ տուգանքի ձևով պատժի նշանակումները, անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակումները, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը, ինչպես նաև մեղադրանքի կողմի բերած՝ մերժված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը, որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց դատարանի կողմից գրավ ընտրելը, որպես խափանման միջոց ընտրված կալանքը մեկ այլ խափանման միջոցով փոխարինվելը և այլ չափորոշիչներ:

Քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպանների գործունեությունը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի վարչական մարմին և /կամ/ դրա վերադաս մարմնին ուղղված դիմումների, բողոքների, կատարված հարցումների թիվը, վարչական մարմնի և /կամ/ դրա վերադասի կողմից բավարարված վարչական բողոքների թիվը, կազմված հայցադիմումների, դիմումների թիվը, հօգուտ վստահորդի կայացված վերջնական դատական ակտերը, միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ և /կամ/ վճռաբեկ բողոքների թիվը և այլ չափորոշիչներ:

Պարբերաբար լրամշակվել և լրացվել է նաև հանրային պաշտպանների աշխատանքի գնահատման «Էլեկտրոնային հանրային պաշտպան» էլեկտրոնային ծրագրի գործիքակազմը:

Հանրային պաշտպաններին նյութապես խրախուսելու, պարգևատրելու կամ այլ սոցիալական երաշխիքներ տրամադրելու համար պետության կողմից միջոցներ չի տրամադրվում: Այդուհանդերձ հընթացս, ինչպես նաև տարվա արդյունքների ամփոփմամբ տարատեսակ եղանակներով իրականացվում են ոչ նյութական խրախուսանքի միջոցներ, այդ թվում՝ տարվա արդյունքների ամփոփմամբ որոշ հանրային պաշտպանների տրվել են շնորհակալագրեր:

➢ *ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄ.*

Հաշվետու տարվա ընթացքում, Գրասենյակում իրականացվել են շարունակական աշխատանքներ՝ մատուցվող ծառայությունների որակը հետզհետե բարձրացնելու, հանրային պաշտպանների հմտություններն ու գիտելիքները բազմաոլորտ զարգացնելու,

նոր մեթոդաբանության և գործիքակազմ ներդնելու ուղղությամբ: Շարունակաբար բարելավվել է ներքին վարչարարությունը և վերահսկողությունը, ինչպես նաև Գրասենյակի գործունեության թափանցիկությունը:

Մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով Գրասենյակում ներդրված են հսկողության և վերահսկողության ճկուն մեխանիզմներ: Մասնավորապես, հանրային պաշտպանների կատարած աշխատանքի նկատմամբ անմիջական հսկողություն են իրականացնում Գրասենյակի ղեկավարը և նրա տեղակալները: Ընդհանուր հսկողությունը գրասենյակի գործունեության նկատմամբ իրականացնում է Պալատի նախագահը: Վերջինիս, այդ հարցում օժանդակում է Պալատի նախագահի տեղակալը և հանրային պաշտպանի գրասենյակի մշտադիտարկման խումբը:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման սահմանված ընթացակարգերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մշտադիտարկման խումբն իրականացնում է հանրային պաշտպանների կողմից վարվող գործերի վերաբերյալ Գրասենյակի էլեկտրոնային տեղեկատվական համակարգում առկա տվյալների ստուգում, անճշտությունների վեր հանում, դատական նիստերի դիտարկում, հանրային պաշտպանների կողմից դրանց, առանց հարգելի պատճառների, չներկայանալու դեպքերի հայտնաբերում, փաստաբանական վարույթներին ներկայացվող պարտադիր պահանջների ստուգում, վստահորդների հետ տարվող աշխատանքների որակի գնահատում:

Գրասենյակի կողմից ցուցաբերվող իրավաբանական օգնության որակի վերահսկողության նպատակներով 2025 թվականի վերջում իրականացվել է հանրային պաշտպանների կատարած աշխատանքի արդյունավետության գնահատում՝ որակական և քանակական չափանիշներով: Հանրային պաշտպանների միջև առողջ մրցակցության մթնոլորտ ձևավորելու, մատուցվող ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, գնահատման արդյունքներով, հաշվետու տարվա ընթացքում

նվազ արդյունավետություն ցուցաբերած հանրային պաշտպանների հետ աշխատանքային պայմանագրերը չեն երկարաձգվել և, այդ հաստիքները, ինչպես նաև մյուս թափուր հաստիքները համալրելու նպատակով իրականացվել է մրցույթ:[3]

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Վերապատրաստման պարտադիր դասընթացներին զուգահեռ, հանրային պաշտպանների մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով, տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ հանրային պաշտպանների համար կազմակերպվել են առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դասընթացներ, անձնական կարողությունների զարգացման ծրագրեր և մասնագիտական քննարկումներ:

Փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հայաստանյան ներկայացուցչության համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում 2025 թվականի ընթացքում կազմակերպվել են մի շարք դասընթացներ: Այդ թվում՝

➢ 2025 թվականի նոյեմբերի 1-ին և 2-ին իրականացվել է աշխատաժողով Դիլիջանում՝ «Իրավաբանական օգնության տրամադրումը ապաստան հայցողներին և փախստականներին» թեմայով, որին մասնակցել են քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հանրային պաշտպանները:

➢ 2025 թվականի դեկտեմբերի 20-ին և 21-ին, իրականացվել է աշխատաժողով Ծաղկաձորում՝ «Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքները քրեական և հանձնման վարույթներում» թեմայով, որին մասնակցել են քրեաիրավական մասնագիտացմամբ հանրային պաշտպանները:

[3] Տես հետևյալ հղմամբ. https://advocates.am/news/view/4410.html

Հարկ է ընդգծել նաև, որ տարբեր ժամանակներում տարբեր ծրագրերով հանրային պաշտպանները, Գրասենյակի ղեկավարը և տեղակալները մասնակցել են աշխատաժողովների, առցանց դասընթացների, արտագնա սեմինար-քննարկումների՝ վերապատրաստումների շրջանակում:

➢ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՅԼ ԱՆՁՆԱՅ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Գրասենյակի կողմից 2025 թվականին նաև ձեռնարկվել են միջոցներ՝ հանրային պաշտպան չհանդիսացող այլ փաստաբանների, ինչպես նաև՝ օրենսդրական փոփոխության արդյունքում՝ հանրային պաշտպանությունն ապահովելու նպատակով մյուս սուբյեկտներին ներգրավելու ուղղությամբ:

2025 թվականի հունվար ամսին Գրասենյակի ղեկավարի և Փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից համատեղ սահմանված Հանրային պաշտպանի կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրման գործընթացին փաստաբանական ակադեմիայի ունկնդիրների ներգրավման կարգի շրջանակում՝ հաշվետու ժամանակահատվածում, անվճար իրավաբանական օգնությունից օգտվել են 697 անձ:

Հանրային պաշտպան չհանդիսացող անվճար և կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանների ցուցակում, բացառությամբ ՄԱԿ-ի հետ համագործակցության շրջանակում ընդգրկված փաստաբանների, 2025 թվականին ներգրավվել է 4 փաստաբան: Նախորդ ժամանակահատվածից ներգրաված շարունակել են մնալ 6 փաստաբան, որոնցից գրեթե բոլորը՝ հարկային օրենսդրության փոփոխության պատճառով պարբերաբար հրաժարվում են հանրային պաշտպանության գործեր ստանձնելուց:

Հատկանշական է նաև, որ հանրային պաշտպանությունում ներգրավվող հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների համար Փաստաբանների պալատի կողմից «Պրո-Բոնո» ծրագրի շրջանակում տրամադրվում է աշխատասենյակ և աշխատանքային

անհրաժեշտ պարագաներ, որը նույնպես նպաստում է փաստաբանների կողմից հանրային պաշտպանության նկատմամբ հետաքրքրություն դրսևորելուն, որը մինչև հարկային օրենսդրության փոփոխությունը որոշակիորեն մեղմում էր Գրասենյակի ծանրաբեռնվածությունը:

VII.ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Ժամանակակից իրավունքի զարգացման միտումները վկայում են այն մասին, որ մասնագիտական աջակցության կարիք են ունենում նաև փաստաբանները: Տվյալ ծրագիրը միտված է տարբեր միջոցառումներ կազմակերպելու եղանակով հիշյալ շրջանակի անձանց համար փորձի փոխանակման հարթակ ստեղծելուն:

ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել և անց է կացվել ամառային ճամբար երիտասարդ փաստաբանների համար:

Միջոցառման շրջանակներում տեղի են ունեցել պանելային քննարկումներ, որոնք երիտասարդ փաստաբանների համար դարձել են մասնագիտական փորձի փոխանակման և անմիջական երկխոսության կարևոր հարթակ: Քննարկումների ընթացքում և քննարկումներից դուրս՝ անմիջական շփման շրջանակներում երիտասարդ փաստաբանները հնարավորություն են ունեցել իրենց հուզող հարցերն ուղղելու ոլորտում երկարամյա փորձ ունեցող փաստաբաններին, ներկայացնելու մասնագիտական խնդիրներն ու մարտահրավերները և ստանալու գործնական խորհուրդներ:

Երկօրյա միջոցառումը հնարավորություն է տվել 100-ից ավելի երիտասարդ մասնագետներին ոչ միայն լսելու առավել փորձառու գործընկերների մասնագիտական փորձը, այլև ծանոթանալու փաստաբանական գործունեության ընթացքում ձևավորված գործնական մոտեցումներին, տարբեր իրավիճակների լուծման մեխանիզմներին և մասնագիտական ճանապարհին հանդիպող մարտահրավերներին:

Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում, իրականացվել են անվճար աշխատասենյակի մասին հայտարարությունների հրապարակումը, հայտերի քննարկում, շահառուների ցուցակների հաստատում, ընթացքում նաև՝ լրացումներ:

VIII. ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ (PRO BONO) ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատի կողմից կատարվել են ծավալուն աշխատանքներ անվճար իրավաբանական օգնության ծավալներն ավելացնելու համար արդյունավետ համակարգ ներդնելու ուղղությամբ:

Մասնավորապես, նախորդիվ, ի կատարումն վերը նշված նպատակի՝ Փաստաբանների պալատը ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ բազմաճավալ աշխատանքներ է կատարել օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ:

«Փաստաբանության մասին» օրենքում կատարված փոփոխություններով ներդրվել է կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակ վարելու, կատարված աշխատանքի վերաբերյալ վերջիններիս կողմից հաշվետվություն ներկայացնելու, նրանց նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու, ինչպես նաև մի շարք այլ կառուցակարգեր: Նշված փոփոխության արդյունքում Պալատի ներքին իրավական ակտերում կատարվել են մի շարք փոփոխություններ:

Սակայն, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շուրջ ձևավորված իրավիճակը կտրուկ փոխվել է, երբ 2024 թվականին, պետությունն այս ուղղությամբ սկսել է վարել նախկինից խիստ տարբերվող և աշխարհում նախադեպը չունեցող հարկային քաղաքականություն:

Մասնավորապես՝ շրջանառության մեջ է դրվել և ընդունվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-285-Ն ՀՀ օրենքը, որով նախատեսվում էր 2025 թվականի հունվարի 1-ից հարկման ենթարկել անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

Պալատը հավատարիմ մնալով իր գաղափարներին, հաշվետու ողջ ժամանակահատվածում կատարելով բոլոր հնարավոր քայլերը ներպետական և միջազգային հարթակներում, պայքարել է նշված օրենքի ընդունումը կանխելու, իսկ դրա ընդունումից հետո՝ դրույթների Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանությունը վիճարկելու ուղղությամբ:

Այնուամենայնիվ, իր կարողությունների սահմաններում Փաստաբանների պալատը 2025 թվականին ևս աջակցել է անվճար իրավաբանականա օգնության տրամադրման խրախուսմանը, մասնավորապես՝ «Պրո-Բոնո» ծրագրի շրջանակում փաստաբաններին տրամադրել է աշխատասենյակ և աշխատանքային անհրաժեշտ պարագաներ, որի նպատակն է եղել նպաստել փաստաբանների կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրման նկատմամբ հետաքրքրություն դրսևորելուն:

IX. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ՇՓՈՒՄՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Փաստաբանների պալատի համար Էական նշանակություն ունի փաստաբանների միջև ոչ ֆորմալ շփումների խթանումը, ինչը կարևոր նախադրյալ է մասնագիտական համայնքի ներսում համագործակցության զարգացման և միմյանց նկատմամբ հարգանքի ձևավորման համար:

Հաշվետու ժամանակահատվածում այս նպատակով կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնք ներկայացված են սույն գլխում:

➢ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ ԳԱՎԱԹ 2025»

2025 թվականի ապրիլի 6-ին տեղի է ունեցել Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի կողմից կազմակերպված **«Փաստաբանների վոլեյբոլի գավաթ 2025»** մրցաշարը: Եզրափակիչ փուլին մասնակցել են փաստաբանների կողմից ձևավորված «ՀՊԳ ԿԱՅԾԱԿ», «ԱԿԱԴԵՄԻԱ», «ՀԱՎԱՔԱԿԱՆ» թիմերը:

Մրցաշարի արդյունքներով հաղթող է ճանաչվել «ՀՊԳ ԿԱՅԾԱԿ» թիմը:

➢ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

2025 թվականի հունիսի 1-ին Փաստաբանների պալատում նշվել է Երեխաների պաշտպանության միջազգային օրը: Հայաստանի և Արցախի փաստաբանների երեխաների համար կազմակերպվել է հնարքների ցուցադրություններ, խաղային և պարային շոուներ, երաժշտական ծրագրեր և այլն:







➢ ՇԱԽՄԱՏ 2025

2025 թվականի հունիսի 8-ին Փաստաբանների պալատում անցկացվել է **«Փաստաբանների շախմատի գավաթ 2025»** մրցաշարը, որին մասնակցել են փաստաբաններ և Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներ:

Պատվավոր տեղերը զբաղեցրած մասնակիցները պարգևատրվել են պատվոգրերով:

Պատվոգրերը հանձնել է Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը:

Բացի այդ, 2025 թվականի օգոստոսի 28-29-ին Սանկտ Պետերբուրգում կայացել է ՌԴ փաստաբանների դաշնային պալատի փաստաբանական օրաթերթի (Адвокатская газета) «Սպիտակ Թագուհի» շախմատի մրցաշարը, որում հաղթող է ճանաչվել Փաստաբանների պալատի հավաքականը: **«Սպիտակ թագուհի» շախմատի ամենամյա մրցաշարը** կայացել է Ռուսաստանի Դաշնության տարբեր մարզերի փաստաբաններից բաղկացած քսաներեք հավաքականի և Հայաստանի փաստաբանների հավաքականի

մասնակցությամբ:

Վերադարձից հետո Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը շնորհավորել են ՀՀ փաստաբանների շախմատի հավաքականի ներկայացուցիչներին՝ Սանկտ Պետերբուրգում անցկացված «Սպիտակ թագուհի» շախմատի 10-րդ առաջնությանը հավուր պատշաճի ներկայանալու և հաղթանակներ նվաճելու համար:



➢ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԳԱՎԱԹ 2025»

2025 թվականի հուլիս ամսին մեկնարկել է **«Փաստաբանների ֆուտբոլի գավաթ 2025»** մրցաշարը: Եզրափակիչ խաղերում երրորդ մրցանակային տեղի համար պայքարի են դուրս եկել փաստաբանների **«ՀՊԳ»** և **«Հայաստան աշխարհ»** թիմերը, իսկ առաջին տեղի գավաթի համար՝ **«Ակադեմիա»** և **«Ֆենիքս»** թիմերը:

«Փաստաբանների ֆուտբոլի գավաթ 2025» առաջնության՝ առաջին պատվավոր տեղը և հաղթական գավաթը նվաճել է «Ակադեմիա» թիմը:



➢ «Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ» ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ

2025 թվականի ապրիլի 18-ին և դեկտեմբերի 9-ին կայացել են Փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կողմից կազմակերպված «Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ» ինտելեկտուալ խաղերը:

Հաղթական թիմերը Փաստաբանների պալատի նախագահի կողմից պարգևատրվել են պատվոգրերով:



➢ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել և անց է կացվել ամառային ճամբար երիտասարդ փաստաբանների համար:

Միջոցառման շրջանակներում տեղի են ունեցել պանելային քննարկումներ *«Փաստաբանական համայնքի արդի խնդիրները, ներառյալ՝ անվճար իրավաբանական օգնության խոչընդոտները, և երիտասարդ փաստաբանների դերը դրանց լուծման հարցում»* և *«Երիտասարդ փաստաբանների ինտեգրումը և ամրակայումը. Pro Bono ծառայությունը որպես դրա միջոց»* թեմաներով, բացի այդ անց են կացվել նաև ինտելեկտուալ խաղեր:

Աշխատաժողովի մասնակից փաստաբանները ստացել են հավաստագրեր:















X. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԹԱՆՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատը կարևորում է Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեության իրականացման գրասենյակային մշակույթի զարգացումը:

2025 թվականի նոյեմբերի 20-ին, ՀՓաստաբանների պալատում տեղի է ունեցել փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչների կլոր սեղան-քննարկում:

Քննարկման շրջանակներում Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանն առաջարկել է Փաստաբանների պալատի կազմում ստեղծել փաստաբանական գրասենյակների զարգացմանը և ընթացիկ խնդիրների լուծմանը աջակցող Փաստաբանական գրասենյակների միություն: Փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչները ողջունել են նախաձեռնությունը և հանդես եկել արդյունավետ առաջարկներով ու մտահաղացումներով: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև փաստաբանական գրասենյակների EXPO ցուցահանդես կազմակերպելու, փաստաբանական գրասենյակի աշխատանքների էլեկտրոնային կառավարման հարթակ մշակելու և այլ առանցքային հարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են փաստաբանական գրասենյակների EXPO ցուցահանդեսի իրականացման նախապատրաստական աշխատանքները: Միջոցառման նպատակն է փաստաբանական գրասենյակների գործունեության, մասնագիտացման ուղղությունների և իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը, ինչպես նաև փաստաբանների միջև մասնագիտական և գործնական շփումների խթանումը:

Ցուցահանդեսի կազմակերպմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների շրջանակներում իրականացվել են միջոցառման ձևաչափի և բովանդակության մշակմանը, մասնակից փաստաբանական գրասենյակների

ներգրավմանը, կազմակերպչական և տեխնիկական հարցերի կարգավորման ուղղված աշխատանքներ:

Հարկ է նշել նաև, որ Փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում առկա է «Գրասենյակներ» բաժինը, որտեղ մշտապես թարմացվում են փաստաբանական գրասենյակների տվյալները: Այս գործիքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր քաղաքացու արագ ծանոթանալ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող գրասենյակների ցանկին և կապ հաստատել ցանկալի գրասենյակի հետ, ինչը նպաստում է փաստաբանական գործունեության իրականացման գրասենյակային մշակույթի զարգացմանը:

XI. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատը կարևորում է ժամանակակից տեխնոլոգիաների և գործիքակազմերի կիրառումը փաստաբանական գործունեության կազմակերպման գործընթացում:

Այս շրջանակներում Փաստաբանների պալատը ներպետական և միջազգային գործընկերների հետ քննարկել է էլեկտրոնային արդարադատության համակարգի մշակման և ներդրման հետ կապված մի շարք առանցքային հարցեր:

Շարունակվել են Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքի կազմակերպման համար նախատեսված էլեկտրոնային հանրային պաշտպանի գրասենյակի տեղեկատվական համակարգի *(այսուհետ՝ նաև Էլեկտրոնային համակարգ)* թարմացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Ձեռնարկվել են միջոցներ նաև Փաստաբանների պալատում գործերի կառավարման և գործավարության էլեկտրոնային համակարգ ներդնելու ուղղությամբ, որը ներառելու է Պալատի բոլոր գործառույթները, ներառյալ՝ տեղեկանքների տրամադրում,

վերապատրաստումների գրանցում, անդամավճարների հավաքագրում, արտոնությունների տրամադրում, արտոնագրերի հաշվառում, կասեցում, դադարեցում և այլն: Նախատեսվում է նաև այս ծրագիրը ներդաշնակեցնել էլեկտրոնային դատավարության ծրագրի հետ:

Նշված համակարգերի թարմացման և վերազինման ուղղությամբ 2025 թվականին Փաստաբանների պալատը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համատեղ կազմել է տեխնիկական պայմաններն ու առաջադրանքը: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից հայտարարվել է մրցույթ, որի արդյունքներով ընտրվել է կազմակերպությունը, որը պետք է իրականացնի նշված աշխատանքները:

Նախատեսվում է Էլեկտրոնային համակարգի վերազինման և վերամշակման արդյունքում ստանալ այնպիսի համակարգ, որը նվազագույն փոփոխությունների ենթարկելով հնարավոր կլինի տրամադրել փաստաբաններին և փաստաբանական գրասենյակներին մասնագիտական աշխատանքների կազմակերպումն ավելի արդյունավետ դարձնելու համար:

XII. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ուսուցման և փաստաբանների վերապատրաստման բաղադրիչի շրջանակներում կարող ենք արձանագրել, որ թե՛ Փաստաբանական ակադեմիայի, թե՛ Փաստաբանների պալատի գործուն ջանքերի շնորհիվ փաստաբանական համայնքն առաջատար դիրքերում է և իր փորձը կիրառվում է շատ երկրներում, այդ թվում՝ զարգացած երկրներում:

Այդուհանդերձ, Փաստաբանների պալատը գտնում է, որ ուսումնական գործընթացը պետք է զարգանա համաժամանակյա ռեժիմով և պարբերաբար կատարելագործվի:

Միաժամանակ, ինչպես փորձն է ցույց տալիս առավել արդյունավետ են հատուկ մասնագիտացված կասկադային (դասախոսությունների խումբ) դասախոսությունները:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փաստաբանների պալատում, ինչպես նախկինում, այնպես էլ հաշվետու ողջ ժամանակահատվածում ինտենսիվորեն կազմակերպվել և իրականացվել են վերապատրաստման դասընթացներ:

Փաստաբանների պալատում գործում է փաստաբանների վերապատրաստման երեք հարթակ՝ վերապատրաստման դասընթացներ տեղում՝ Փաստաբանների պալատում կամ Փաստաբանական ակադեմիայում, հեռավար և առցանց (online) վերապատրաստում:



Յուրաքանչյուր ամսվա վերջում Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվում և փաստաբաններին էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է հաջորդ ամսվա համար փաստաբանների վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը:

2025 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել **վերապատրաստման 215 անվճար դասընթաց՝** ներառյալ հեռավար և առցանց

վերապատրաստման դասընթացները, ինչպես նաև ակումբի նիստերը և Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված հաստատությունների կողմից անցկացվող դասընթացները: Դասընթացներին մասնակցել են **2919** փաստաբաններ:

Փաստաբանների պալատը Փաստաբանական ակադեմիայի հետ համատեղ կազմակերպել է 7 վերապատրաստման դասընթաց՝ առկա և հեռավար տարբերակով:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՆԱԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր կիսամյակի Փաստաբանների պալատի նախագահի որոշումներով հաստատվում են վերապատրաստման դասընթացների թեմաները: Ինչպես նախկինում, այնպես էլ Հաշվետու ժամանակահատվածում Պալատի նախագահի որոշումներով հաստատվել են թվով **174 վերապատրաստման դասընթացների թեմաներ**: Այդ թեմաներն առանձնացված են ըստ իրավունքի տարբեր ճյուղերի՝ քրեական, քաղաքացիական, վարչական և միջազգային իրավունք, ինչպես նաև գիտագործնական և այլ ուղղվածությունների (օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ, ներդրումային ոլորտ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը փաստաբանական գործունեության մեջ, զինծառայողների և, նրանց ընտանիքի անդամների իրավունքներ, էլեկտրոնային կառավարման գործիքները, անչափահասների իրավունքների պաշտպանության քրեաիրավական ասպեկտները, անհաղթահարելի ուժը քաղաքացիաիրավական հարաբերություններում և այլն):

Հարկ է նկատել, որ փաստաբանների վերապատրաստման համար հաստատված թեմաների գերակշիռ մասն ընտրվում են հենց փաստաբանների կողմից ներկայացված առաջարկներից:

➢ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Փաստաբանների պալատում վերապատրաստման դասընթացների դասընթացավարներն ընտրվում են խիստ չափանիշների հիման վրա, որպեսզի մասնագիտական վերապատրաստումը լինի որակյալ:

Այդ չափանիշները սահմանվել են Փաստաբանների պալատի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 417-Լ որոշման թիվ 1 հավելվածով, համաձայն որի՝ փաստաբանը կամ այլ մասնագետը կարող է ընտրվել դասընթացավար, եթե՝

1. *ունի լսարանի հետ աշխատելու հմտություններ,*
2. *ներկայացրել է Պալատի նախագահի հաստատած թեմաներից որևէ մեկի վերաբերյալ դասավանդման առարկայական ծրագիր, և*
3. *ունի՝*

- *առնվազն 5 (հինգ) տարվա փաստաբանական գործունեության ստաժ, կամ*
- *գիտական աստիճան, կամ*
- *դատավորի կարգավիճակ, կամ*
- *դասախոսի կարգավիճակ, կամ*
- *այլ մասնագիտությունների դեպքում՝ 5 (հինգ) տարվա համապատասխան մասնագիտական ստաժ:*

Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա) առարկայի վերապատրաստման դասընթացներ կարող է վարել Պալատի խորհրդի անդամը, որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամը, Պալատի աշխատակազմի փաստաբան անդամը, ինչպես նաև Դասընթացավարների ցուցակում ընդգրկված այլ փաստաբանը:

Նույն կարգի համաձայն՝ դասավանդողների ընտրությունը կատարում է Պալատի աշխատակազմի ղեկավարը *(Փաստաբանների պալատի նախագահի 23.12.2020թ. թիվ 417-Լ որոշմամբ ձևավորվում է նաև դասընթացավարների ընտրության փորձագետների խումբ):*

➢ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Փաստաբանների պալատից և Փաստաբանական ակադեմիայից բացի՝ փաստաբաններին վերապատրաստելու իրավունք է նախատեսվել նաև Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված այլ կազմակերպությունների համար:

Փաստաբանների պալատի խորհրդի 15.08.2024թ. թիվ 1415-Լ որոշմամբ հաստատվել է «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգը, որով նախատեսվել են վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար կազմակերպություններին հավատարմագիր տալու հստակ չափանիշներ: Նշված կարգի համաձայն 2025 թվականին փաստաբանների վերապատրաստումը կազմակերպելու համար հավատարմագրվել են հետևյալ կազմակերպությունները.

- ***«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն.***
- ***Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ (IRZ).***
- ***«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ.***
- ***«Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամ***
- ***Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ.***
- ***Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ.***
- ***Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ/UNICEF).***
- ***«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն.***

2025 թվականին Փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված կազմակերպությունների կողմից փաստաբանների համար կազմակերպվել է շուրջ 11 վերապատրաստման դասընթաց:

➢ ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍՏԱՆՑԻՈՆ) ԵՎ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

2025 թվականին վերապատրաստման դասընթացների մեծ մասն անցկացվել է առկա և հեռավար տարբերակով, որի արդյունքում կազմակերպվել են շուրջ **180** հեռավար դասընթացներ: Հարկ է նշել, որ 2025 թվականին կազմակերպվել **են 50-ից ավել** հեռավար դասընթացներ միայն ՀՀ մարզի փաստաբանների համար: Առցանց հարթակում տեղադրվել է 1 նոր վերապատրաստման տեսադաս:

➢ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համագործակցության շրջանակներում Արցախի փաստաբանների, ինչպես նաև ՀՀ մարզերի փաստաբանների համար կազմակերպվել են 15-ից ավել 2-օրյա վերապատրաստման դասընթացներ: Դասընթացները տեղի են ունեցել Շիրակի, Վայոց Ձորի, Լոռու և Տավուշի մարզերում:

Փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) համագործակցության շրջանակներում **ՀՀ բոլոր մարզերի հանրային պաշտպանների համար կազմակերպվել են երկուսից ավել երկօրյա վերապատրաստման դասընթացներ:** Դասընթացները տեղի են ունեցել Ծաղկաձոր և Դիլիջան քաղաքներում:

Դասընթացները վարել են տվյալ ոլորտի լավագույն մասնագետները:

Փաստաբանների պալատը և Ֆրանսիայի դեսպանատունը համատեղ 2025 թվականի ընթացքում կազմակերպել են եռօրյա վերապատրաստման դասընթաց՝ բնապահպանական իրավունքի հիմնախնդիրները, իրավական մարտահրավերները, հնարավոր ռազմավարությունը թեմայով:

XIII. ՏԱՐԵՑ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստաբանների պալատը մշտապես իր աջակցությունն է ցուցաբերել դրա կարիքն ունեցող փաստաբաններին:

Ինչպես ցույց է տալիս փորձը աջակցության կարիք ունեն հատկապես տարեց փաստաբանները: Նրանց հանդեպ օժանդակությունը դրսևորվել է անդամավճարի և պարտադիր վերապատրաստման դասընթացներին մասնակցելուց ազատելու արտոնություններ տրամադրելու ձևով:

«Փաստաբանության մասին» օրենքի 45.12-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ *փաստաբանը պարտավոր է անցնել փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում քառասունութ ժամից պակաս լինել:*

Փաստաբանների պալատի խորհրդի **2023 թվականի հունվարի 13-ին** թիվ 2/5-Լ որոշմամբ հաստատված՝ *«Փաստրաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու»* կարգի համաձայն՝ 63 տարին լրացած և փաստաբանական գործունեությամբ չզբաղվող փաստաբանները **ազատվում են վերապատրաստմանը մասնակցելու պարտավորությունից:**

63 տարին լրացած և փաստաբանական գործունեությամբ չզբաղվող **20 փաստաբան 2025 թվականին** ազատվել է վերապատրաստմանը մասնակցելու պարտավորությունից:

Բացի այդ, **«Փաստաբանության մասին» օրենքի** 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Փաստաբանների պալատի խորհրդի կողմից **2023 թվականի հունվարի 13-ին** ընդունել է «Փաստաբանի անդամավճարի, հավակնորդի, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 2/6-Լ որոշումը:

Համաձայն այդ որոշման Հավելված 1-ի 20-րդ կետի՝

«Փաստաբանը անդամավճար վճարելու պարտավորությունից ամբողջությամբ ազատվում է Պալատի կանոնադրությանը և սույն կարգին համապատասխան՝ հետևյալ դեպքերում. (…) 6) 70 (յոթանասուն) տարին լրացած լինելու դեպքում»:

2025 թվականին անդամավճար վճարելու պարտավորությունից ազատվել է **70 տարին լրացած 23 փաստաբան:**

XIV. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Պալատի ներկայացուցիչները մշտապես մասնակցել են երկրում տեղի ունեցող իրավական գործընթացներին:

2025 թվականներին Պալատ է մուտքագրվել թվով 25 օրենսդրական նախագիծ, որոնց վերաբերյալ Պալատը ներկայացրել է կարծիքներ, դիրքորոշումներ և առաջարկություններ, որոնք իրենց շոշափելի ազդեցությունն են ունեցել իրավական ակտերի մշակման վրա:

Պալատի ներկայացուցիչները մասնակցել են քննարկումների տարբեր պետական կառույցների հետ:

2025 թվականի մարտի 19-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել քննարկում «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվող վիճարկման հայցը վարույթ ընդունելու խնդրահարույց դրույթների վերաբերյալ: Քննարկումը նախաձեռնվել էր հաշվի առնելով մասնագիտական հանրությունում հնչած բազմաթիվ բացասական արձագանքները, ինչպես նաև նախագծի հնարավոր ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի վրա: Քննարկմանը մասնակցել են Փաստաբանների պալատի, ՀՀ դատական դեպարտամենտի, ՓՄՁ ասոցացիայի, ինչպես նաև գիտական հանրույթի և հասարակական կազմակերպությունների այլ

ներկայացուցիչներ: Ելույթ ունեցողները ներկայացրել են նախագծի խնդրահարույց դրույթները և հնարավոր բացասական հետևանքները:

2025 թվականի ապրիլի 21-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից կազմակերպվել է «Արդարադատությունը որպես արդարության հասնելու գործիք» խորագրով համաժողով, որին մասնակցել և համաժողովի՝ *«Ինչու է ուշանում արդարադատությունը»* խորագրով առաջին պանելային քննարկման շրջանակներում բանախոսությամբ հանդես է եկել Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը: Նույն պանելային քննարկման շրջանակներում որպես բանախոսներ հանդես են եկել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Արթուր Աթաբեկյանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանը, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը և ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը:


2025 թվականի նոյեմբերի 13-ին Փաստաբանների պալատը՝ ՀՀ հաշտարարների պալատի հետ համատեղ անց է կացրել կլոր-սեղան քննարկում՝ օրենսդրական փոփոխությունների իրազեկվածության ապահովման, պարտադիր հաշտարարության ընթացքում առաջացած խնդիրների քննարկման, ինչպես նաև գործող օրենսդրության լավարկման վերաբերյալ:

XIV. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱՁԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Փաստաբանների պալատի օրենքով ամրագրված խնդիրներից է՝ հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը նպաստելը: Այս նպատակի իրագործումն իր հերթին խթանում է հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացումը, փաստաբանի գործունեության իրավապաշտպան բնույթի ընկալման ձևավորումը:

Հաշվետու ժամանակահատվածում հանրային իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ Փաստաբանների պալատը իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք ամփոփ ներկայացված են սույն գլխում:

➢ «ՓԱՍՏԱԲԱՆԻ ԽՈՐՀՐԴՈՎ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԸ



2022 թվականին մեկնարկել է **«Փաստաբանի խորհրդով» հաղորդաշարը**, որի նկարահանումներն իրականացվել են Փաստաբանների պալատի գրադարանում: **2023 թ. հոկտեմբերի 15-ից հաղորդաշարը** նկարահանվել և հեռարձակվել է **«Հ2»** հեռուստաալիքի եթերում:

Հանրության իրավագիտակցության բարձրացմանը և իրավական մշակույթի զարգացմանը նպաստելու նպատակով ստեղծված հաղորդաշարը տարածում է ստացել նաև «Հ2» Հ/Ը-ի Յութուբյան ալիքում, ստեղծվել են **«Փաստաբանի խորհրդով հաղորդաշար»** Ֆեյսբուք և Տիկ-Տոկ սոցիալական ցանցերի էջեր: Սոցիալական

հարթակների միջոցով հաղորդաշարին լայն տարածում ապահովելու և հանրությանն ավելի հասանելի դարձնելու նպատակով թողարկումները նաև գովազդվում են:

2025 թվականի ընթացքում նկարահանվել և հեռարձակվել է 42 հաղորդում:

➢ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Կանանց միջազգային օրվա կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատը նախաձեռնել է «Անվճար իրավաբանական խորհրդատվություն կանանց համար» միջոցառումը, որի շրջանակներում միջոցառմանը միացած փաստաբանները, փաստաբանական գրասենյակները և Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրները անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել կանանց: Միջոցառումն անց է կացվել **2025 թվականի մարտի 10-ից 14-ը:**

Նշված միջոցառման նպատակներից էին՝ խթանել կանանց իրավունքների պաշտպանությունը Հայաստանում, ինչպես նաև բարձրացնել հանրային իրավագիտակցությունը և փաստաբանին դիմելու իրավական մշակույթը:

➢ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ճանաչողական այցեր են իրականացվել Փաստաբանների պալատ:

Մասնավորապես՝

2025 թվականի փետրվարի 13-ին Փաստաբանների պալատում հյուրընկալվել են Ոստիկանության ակադեմիայի ուսանողները:

Հոկտեմբերի 7-ին Փաստաբանների պալատում «Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» դասընթացի շրջանակներում ճանաչողական այցով հյուրընկալվել են ՀՀ Գիտությունների ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնի մագիստրատուրայի ուսանողները:

Փաստաբանների պալատ, Փաստաբանական ակադեմիա և Հանրային պաշտպանի գրասենյակ են այցելել Հայ-Ռուսական համալսարանի «Ուսմունք» դպրոցի 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանի աշակերտները:



XV. ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատը կյանքի է կոչել բազմաթիվ նախաձեռնություններ և իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք նպաստել են միջհամայնքային կապերի զարգացմանը:

❖ Փաստաբանների պալատի ներկայացուցիչները մասնակցել են ներպետական և միջազգային կառույցների կողմից կազմակերպված բազմաթիվ քննարկումների, վեբինարների, նիստերի, հանդիպումների, այդ թվում՝ արտերկրում:

- 2025 թվականի փետրվարի 13-ին Փաստաբանների պալատի խորհրդի անդամ

Արսեն Հարությունյանը մասնակցել է Ռուսաստանի Դաշնության Եկատերինբուրգ քաղաքում կազմակերպված «Կովալևյան ընթերցումներ» միջազգային գիտագործնական կոնֆերանսին: Արսեն Հարությունյանը նաև հանդես է եկել զեկույցով:

- Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և Պալատի նախագահի միջազգային հարաբերությունների և ԵՄ համագործակցության գծով խորհրդական Մարտուն Փանոսյանը 2025 թվականի փետրվարի 26-ից հինգ աշխատանքային օրով գտնվել են Ավստրիայում, մասնակցել Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) PECO կոմիտեի նիստին, որտեղ Հայաստանի փաստաբանների պալատը հանդես էր գալիս որպես զեկուցող՝ Հայաստանում հարկային փոփոխությունների արդյունքում փաստաբանական ծառայությունների հարկերի բարձրացման, անվճար իրավաբանական օգնության հարկման և այլ խնդիրների շուրջ:
- Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ներկա է գտնվել Եվրոպայի Փաստաբանների պալատների նախագահների 53-րդ կոնֆերանսին, որի շրջանակներում հանդիպումներ և քննարկումներ է ունեցել մի շարք երկրների Փաստաբանների պալատների և Փաստաբանական միությունների նախագահների հետ: Աշխատանքային այցի շրջանակներում Սիմոն Բաբայանը հանդիպում է ունեցել նաև CCBE-ի ղեկավար Թիերի Վիքերսի և Ավստրիայի փաստաբանների պալատի նախագահ Արմենակ Ութուջյանի հետ:
- 2025 թվականի հունիսի 16-ին Պալատի ներկայացուցիչները մասնակցել են Եվրոպայի խորհրդի կազմակերպած «Փաստաբանների պաշտպանություն, արդարադատության հասանելիության պահպանում խորագրով բարձր մակարդակի համաժողովին, որը նվիրված էր «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին» Կոնվենցիայի ընդունմանը և ստորագրման համար բացմանը:
- Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցը, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը, ՀՊԳ ապաստան

հայցողների հարցերով խորհրդատու-փաստաբան Լևոն Վարդապետյանը և ապաստան հայցողներին և փախստականներին տրամադրվող իրավաբանական օգնության թիմի փաստաբան Անուշ Շահրամանյանը աշխատանքային այցով գտնվել են Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում: Փաստաբանների պալատի ներկայացուցիչները ՄԱԿ փախստականների հարցերով հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում մասնակցել են *«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոն 39. միջազգային պաշտպանության կարիք ունեցող մարդկանց համար միջանկյալ միջոցներ»* թեմայով սեմինարին:

- 2025 թվականի նոյեմբերի 8-ին Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Արսեն Հարությունյանը Վրաստանի փաստաբանների ասոցիացիայի հրավերով Թբիլիսիում մասնակցել են *«Իրավաբանական մասնագիտության պաշտպանության մասին կոնվենցիան՝ որպես իրավունքի գերակայության պաշտպանության արդյունավետ ուղի»* խորագրով միջազգային համաժողովին: Համաժողովը կազմակերպվել է Եվրոպական փաստաբանների ասոցիացիայի (AEA-EAL) հետ համատեղ և ընդգրկել է տարբեր երկրների Փաստաբանների պալատների և միությունների ներկայացուցիչների: Միջազգային համաժողովի ընթացքում Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հանդես է եկել ելույթով:
- Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը Վրաստանի Թբիլիսի քաղաքում մասնակցել է Վրաստան–Հայաստան իրավական վեցերորդ ֆորումին: Ֆորումի ընթացքում Փաստաբանների պալատի նախագահը հանդես է եկել ելույթով, որում նա մասնավորապես խոսել է իրավական հանրության շրջանում արհեստական բանականության կիրառելիության, դրա հնարավոր ազդեցության և ռիսկերի մասին՝ ինչպես հնարավորությունների, այնպես էլ մասնագիտական մարտահրավերների համատեքստում:

• Փաստաբանների պալատի և ՀՀ Փաստաբանական ակադեմիայի պատվիրակությունը մասնակցել է Ֆրանսիայի Փարիզի փաստաբանների միության և Օ Դը Սենի փաստաբանների միության տարեկան համաժողովներին: Հայկական պատվիրակությունը հյուրընկալվել է նաև Փարիզի փաստաբանական դպրոցում: Փարիզի փաստաբանական դպրոցում տեղադրված է հայ նշանավոր գրող, փաստաբան և քաղաքագետ Գրիգոր Զոհրապի (1861-1915) հուշատախտակը՝ ի նշան հայ ազգի և մասնագիտության նկատմամբ հարգանքի: Փարիզի փաստաբանական դպրոցի հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ ապագայում արդյունավետ համագործակցելու համար: Այցի շրջանակներում Հայաստանի փաստաբանների պալատի և փաստաբանական ակադեմիայի պատվիրակությանը, ինչպես նաև Մոնպելյեի փաստաբանների միության ղեկավարներին հյուրընկալել է Մոնպելյեի քաղաքապետ Միքաել Դըլաֆոսը: Ներկաները կարևորել են հայ-ֆրանսիական բարեկամությունը, ինչպես նաև փաստաբանների դերը:

❖ Պալատ են այցելել օտարերկրյա պետությունների փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ.

• 2025 թվականին «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին կոնվենցիա. կարիքը և ակնկալիքները» թեմայով համաժողովի մասնակից պետությունների՝ Ֆրանսիայի, Բուլղարիայի, Լիբանանի և Վրաստանի փաստաբանների պալատների և միությունների ներկայացուցիչներն այցելել են Փաստաբանների պալատ, Փաստաբանական ակադեմիա և Հանրային պաշտպանի գրասենյակ:

• 2025 թվականի ապրիլի 7-ին Փաստաբանների պալատ է այցելել Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի փաստաբանների միության պատվիրակությունը՝ միության նախագահ Պիեր Լաֆոնթի գլխավորությամբ:

• 2025 թվականին Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հյուրընկալել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մաքսիմ

Լոնգանգեին, գրասենյակի ղեկավարի տեղակալ Վեդրան Յան-Քյելդսենին և ԵԽ գրասենյակի Աջակցություն դատահիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում ծրագրի ղեկավար Արման Զրվանդյանը:

- Փաստաբանների պալատը, ի դեմս պալատի նախագահ Սիմոն Բաբայանի և Փաստաբանական ակադեմիան, ի դեմս ռեկտոր Արա Զոհրաբյանի, հյուրընկալել են Կանադայի Նյու Բրանսվիկ նահանգի Գերագույն դատարանի նախագահ Մարկ Ռիչարդի գլխավորած պատվիրակությանը՝ Նոր Շոտլանդիա նահանգի Վերաքննիչ դատարանի դատավոր Քերոլ Բիթոնի, Կանադայի արդարադատության կառավարման ինստիտուտի գործադիր տնօրեն Քրիստին Օ'Դոհերթի, Կանադայի Դաշնային դատական գործերի հանձնակատարի գրասենյակի միջազգային ծրագրերի տնօրեն Օլեգ Շակովի կազմով:

➢ ՀԱՄԱԺՈՂՈՎ «ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ. ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ.

2025 թվականին Պալատի նախաձեռնությամբ Երևանում իրականացվել է ***«Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին կոնվենցիա. կարիքը և ակնկալիքները»*** թեմայով համաժողովը:

Ապրիլի 23-ին տեղի է ունեցել *«Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին կոնվենցիայի կիրառման հնարավոր արդյունքները»* թեմայով պանելային քննարկում, որին մասնակցել են Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը, Ֆրանսիայի փաստաբանների պալատների ազգային խորհրդի նախագահ Ժուլի Կուտուղիեղը, Բուլղարիայի Փաստաբանների բարձրագույն խորհրդի նախագահ Իվայլո Դերմենջիևը, Բեյրութի փաստաբանների միության նախագահ Ֆադի Մասրին, Օ դե Սենի փաստաբանների պալատի նախագահ Մարի Պասկալ Պիոն:

Նույն օրը տեղի է ունեցել նաև *«Փաստաբանների իրավունքների պաշտպանության արդի հիմնախնդիրները»* թեմայով պանելային քննարկում, որին մասնակցել են

Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցը, Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի անդամ Արմինե Ֆանյանը, Ֆրանսիայի փաստաբանների միությունների ազգային խորհրդի մասնագիտական գաղտնիության աշխատանքային խմբի ղեկավար Վենսան Նիողեն, Օ դե Սենի փաստաբանների միության նախկին նախագահ Վենսան Մողեն, Մոնպելիեի փաստաբանների միության նախկին նախագահ Լյուք Քիրքյաչարյանը, Վրաստանի փաստաբանների միության իրավաբանների իրավունքների պաշտպանության կոմիտեի նախագահ Օնիս Մարգիանին:





❖ ***2025 թվականին կնքվել են համագործակցության հուշագրեր.***

- ՀՀ փաստաբանների պալատի և Բեյրութի փաստաբանների միության միջև կնքվել է համագործակցության հուշագիր:
- ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ հաշտարարների պալատի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:
- Ֆրանսիայի Հարավային կենտրոն փաստաբանական դպրոցի և Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիայի միջև Մոնպելյե քաղաքում ստորագրվել է համագործակցության հուշագիր:

❖ ԲԱԺԻՆ II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը փաստաբանների պալատի բարձրագույն մարմինն է, որը՝

1) հաստատում է փաստաբանների պալատի կանոնադրությունը և փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կամ դրանց լրացումները կամ փոփոխությունները.

2) ընտրում է փաստաբանների պալատի նախագահին, խորհրդի և կարգապահական հանձնաժողովի անդամներին.

3) լուծում է օրենքով կամ փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր:

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը կազմված է փաստաբանների պալատի անդամ բոլոր փաստաբաններից:

Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը (գումարմամբ կամ հեռակա կարգով) **հրավիրվում է փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ՝ ոչ ուշ, քան երկու տարին մեկ:**

Հաշվետու ժամանակահատվածում երկու անգամ հրավիրվել է Ընդհանուր ժողով:

2025 թվականի փետրվարի 10-ին տեղի է ունեցել Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը *Փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրության և ««ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականին ընդունված թիվ ՀՕ-285-Ն օրենքի՝ փաստաբանությանը առնչվող խնդրահարույց*

կարգավորումները դատապարտող հայտարարության ընդունման» վերաբերյալ օրակարգային հարցերով:

2025 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի է ունեցել Փաստաբանների պալատի Ընդհանուր ժողով *Փաստաբանների պալատի նախագահի ընտրության և Փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրակարգային հարցերով:*

Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովն առանձին արձանագրություններով թվականին ամփոփել է վերը նշված օրակարգային հարցերով ընդհանուր ժողովի արդյունքները:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Փաստաբանների պալատի խորհուրդը փաստաբանների պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթի շրջանակներում ընդունված որոշումները վերանայող մարմինն է:

Փաստաբանների պալատի խորհուրդը կազմավորվում է չորս տարի ժամկետով՝ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից ընտրված փաստաբաններից (բացառությամբ խորհրդի նախագահի):

2025 թվականի փոտրվարի 10-ին տեղի է ունեցել Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը, որի արդյունքում՝ 4 տարի ժամկետով ընտրվել են Փաստաբանների պալատի խորհրդի անդամները:

Փաստաբանների պալատի խորհուրդն ունի տասներկու անդամ՝ չհաշված խորհրդի նախագահը: Փաստաբանների պալատի նախագահն ի պաշտոնե փաստաբանների պալատի խորհրդի նախագահն է:

Խորհուրդը 2025թ. անցկացրել է ընդհանուր **31** ընթացիկ նիստ, որոնցից՝ **2**-ն առկա ձևաչափով, **29**-ը համակցված՝ առկա և հեռավար եղանակներով: Նիստերի արդյունքում կայացվել է **350** որոշում:

➢ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

«Փաստաբանության մասին» օրենքի, ինչպես նաև Փաստաբանների պալատի կանոնադրության համաձայն՝ ***Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործն ըստ էության քննող և որոշում կայացնող մարմինն է:***

Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետ նաև՝ Հանձնաժողով**) կազմավորվում է չորս տարի ժամկետով՝ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից ընտրված ինը փաստաբաններից:

Փաստաբանների պալատի հանձնաժողովը՝

1) քննարկում և լուծում է փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցեր.

2) իրականացնում է «Փաստաբանության մասին» օրենքով և Փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հանձնաժողովը 2025թ. անցկացրել է ընդհանուր 110[4] նիստ, որոնցից՝ 34 նիստ անցկացվել է համակցված հեռավար և առկա ձևաչափով, իսկ 76 նիստ՝ առկա ձևաչափով:

2025 թվականին Հանձնաժողովը քննել և դրանց արդյունքներով կայացրել է **95** որոշում, 3 գործով կայացվել է կասեցման որոշում:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Որակավորման հանձնաժողով) որակավորման քննությունները կազմակերպելու և դրանց արդյունքներն ամփոփելու նպատակով երկու տարի ժամկետով կազմավորված, ինն անդամից բաղկացած մարմին է:

[4] 44 նիստ հրավիրվել է Հանձնաժողովի որոշման եզրափակիչ մասը հրապարակելու նպատակով:

«Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու տարի ժամկետով՝ ինն անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ.

1) փաստաբանների պալատի խորհրդի ընտրած հինգ փաստաբան.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.

3) Վճռաբեկ դատարանից մեկ դատավոր՝ Վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ.

4) երկու իրավաբան գիտնական՝ սույն հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի լիազորությունները, նիստերի գումարման կարգը և Փաստաբանների պալատի կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են Փաստաբանների պալատի խորհրդի կողմից ընդունված որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգով:

Փաստաբանների պալատի խորհրդի **14.03.2025թ. թիվ 6/10-Ա որոշմամբ** երկու տարի ժամկետով կազմավորվել է փաստաբանների պալատի նոր որակավորման հանձնաժողով:

2025 թվականին կազմակերպված որակավորման քննություններն անցկացվել են երկու փուլով՝ առաջին փուլի ընթացքում հավակնորդները կատարել են գրավոր առաջադրանք, իսկ երկրորդ փուլի ընթացքում պատասխանել են քննատոմսի և Որակավորման հանձնաժողովի անդամների հարցերին:

2025 թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցելու համար դիմում են ներկայացրել ընդհանուր 127 հավակնորդ, որից 125-ը Փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրներ, իսկ 2 հավակնորդ՝ հատուկ կարգով:

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների որակավորման քննության գրավոր փուլին մասնակցել է 72 հավակնորդ:

Ունկնդիրների քրեաիրավական ուղղվածության դիմորդների որակավորման քննության գրավոր փուլին մասնակցել է 53 հավակնորդ:

Ունկնդիրների քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների որակավորման քննության բանավոր փուլին մասնակցել է 57 հավակնորդ:

Քրեաիրավական ուղղվածության դիմորդների որակավորման քննության բանավոր փուլին մասնակցել է 48 հավակնորդ:

2025 թ. թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննությունները ընդհանուր հանձնել է 98 հավակնորդ, չի հանձնել 27 հավակնորդ (19 քաղ./ 8 քր.)

2025 թվականի գարնանը որակավորման քննություններին մասնակցելու դիմում ներկայացրած հավակնորդներից 2-ը քննությանը չեն ներկայացել:

2025թ. գարնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցած հավակնորդների ընդհանուր քանակը[1՝]		
98 (78%) հավակնորդ հանձնել է		***25 (22%) հավակնորդ չի հանձնել***

2025 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննությունները անցկացվել են երկու փուլով, որին մասնակցելու համար դիմում է ներկայացրել 184 հավակնորդ:

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության որակավորման քննությունների գրավոր փուլին մասնակցել է 102 հավակնորդ:

Քրեաիրավական ուղղվածության որակավորման քննությունների գրավոր փուլին մասնակցել է 80 հավակնորդ:

Քաղաքացիաիրավական և ուղղվածության որակավորման քննությունների բանավոր

փուլին մասնակցել է 88 հավակնորդ:

Քրեաիրավական ուղղվածության որակավորման քննությունների բանավոր փուլին մասնակցել է 74 հավակնորդ:

2025 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննությունները հանձնել է 149 հավակնորդ (81 քաղ./ 68 քր.), չի հանձնել 33 հավակնորդ (քաղ.21 / 12 քր.):

2025 թվականի աշնանը որակավորման քննություններին մասնակցելու դիմում ներկայացրած հավակնորդներից 2-ը քննությանը չի ներկայացել:

2025թ. աշնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցած հավակնորդների ընդհանուր քանակը՝		
149 (82%) ***հավակնորդ հանձնել է***		***33 (18%)*** ***հավակնորդ չի հանձնել***

II. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2025 թվականի ընթացքում Կարգապահական հանձնաժողովի կողմից քննված և ավարտված գործերի վիճակագրություն

	Ավարտված կարգապահական վարույթները, այդ թվում՝	**95**
1.1	Կարճված	35
1.2	Պատասխանատվության ենթարկված	60
2	**Կարճված վարույթները ըստ հիմքերի, այդ թվում՝**	**35**
2.1	Կարճված փաստաբանների բողոքների հիման վրա հարուցվածներից	0
2.2	Կարճված վստահորդների բողոքների հիման վրա հարուցվածներից	12
2.3	Կարճված հակառակորդ կողմի բողոքի հիմքով հարուցվածներից	1
2.4	Կարճված այլ հիմքերով հարուցվածներից (ԶԼՄ, քննչական մարմին)	0
2.5	Կարճված վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված գործերից	22

3	**Պատասխանատվության ենթարկվածներ**	**60**
3.1	Փաստաբանների բողոքների հիման վրա հարուցվածներից	2
3.2	Վստահորդների բողոքների հիման վրա հարուցվածներից	21
3.3	Հակառակորդ կողմի բողոքի հիմքով հարուցվածներից	2
3.4	Այլ հիմքերով հարուցվածներից (ԶԼՄ, քննչական մարմին)	4
3.5	Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված գործերից	31

ՔՆՆՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ՝ 95		
Կարճված վարույթներ՝ ***35 (37%)*** ***այդ թվում՝***		***Կարգապահական տույժով ավարտված վարույթներ՝*** ***60 (63%)*** ***այդ թվում՝***

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

№	*Վիճակագրական տվյալի չափանիշը*	*Վիճակագրական տվյալը*
1	Կայացած նիստերի քանակը	**110**
2	Կայացված որոշումների ընդհանուր քանակը	**95**

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

№	**Վիճակագրական տվյալի չափանիշը**	**Վիճակագրական տվյալը**
1	Խորհրդի ընթացիկ նիստերի քանակը	**31**
3	Խորհրդի բողոքարկման վարույթների քանակը	**21 (21 մերժում)**

ԽՈՐՀՐԴԻ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍՏԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

№	Վիճակագրական տվյալի չափանիշը	Վիճակագրական տվյալը
1	փաստաբանական գործունեության արտոնագիր տալու հարց	7
2	փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցնելու հարց	133
3	փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը վերականգնելու հարց	98
4	փաստաբանական գործունեության արտոնագրի գործունեությունը դադարեցնելու հարց	8
5	այլ երկրի փաստաբանին մեկ տարի ժամկետով ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելու հավատարմագիր տրամադրելու հարց	8
6	անդամավճարի արտոնության հարց	3
8	հաշվետվությունները հաստատելու հարց	11
9	փաստաբանի օգնականի արտոնագիր տրամադրելու հարց	35
10	փաստաբանի օգնականի արտոնագրի գործողության ժամկետը երկարաձգելու հարց	5
11	ՀՀ փաստաբանների պալատի անունից խոշոր գործարք կնքելու համաձայնություն (թույլտվություն) տալու հարց	4
12	Կարգեր հաստատելու և փոփոխություններ կատարելու հարցեր	12
13	Ծրագրեր հաստատելու հարցեր (բյուջե, հաստիքացուցակ)	4
14	դիմում և բողոք քննարկելու մասին հարցեր	5

15	ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողով հրավիրելու և հանձնաժողովների բնականոն գործունեությունը կազմակերպելուն ուղղված հարցեր	9
16	Այլ	8
17	Նախագահի որոշումների	356

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

համեմատության ժամանակահատվածը՝ 2024-2025 թվականներ

№	Փաստաբանների նկատմամբ 2024 թվականին հարուցված վարույթներ (քանակ)	2024	2025	տարբեր. քանակական արտահայտմամբ	տարբեր. տոկոսային արտահայտմամբ
		162	95	(67)	(41,4%)
1.	Փաստաբանների դեմ բողոքների հիման վրա հարուցված վարույթների թիվը	50	42	(8)	(16%)
2.	Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը	0	0	-	-
3.	Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը	112	53	(59)	-(52,6%)

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

№	1.		2.		1 և 2 յուրաքանչյուրի համեմատական
	Փաստաբանների դեմ ստացված բողոքների ընդհանուր քանակը այդ թվում՝	***175***	***Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ, այդ թվում՝***	***42***	
1	քննության առնված բողոքներ	**101**	քննության առնված բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	**42**	***41,6%***
1.1	փաստաբանների վստահորդների և քաղաքացիների բողոքներ	**87**	փաստաբանների վստահորդների և քաղաքացիների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	**38**	***43.7%***
1.2	փաստաբանների բողոքներ փաստաբանների դեմ	**6**	փաստաբանների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	**0**	**-**
1.3	այլ բողոքներ	**8**	այլ բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	**4**	***50%***
1.4	ընդամենը բողոքներ	**175**	քննության չառնված բողոքներ[5]	**74**	***42,3%***

2025 թվականի հունվար-դեկտեմբեր (ներառյալ) ամիսների ընթացքում Փաստաբանների պալատում փաստաբանների դեմ ստացվել են ընդհանուրը 175 **բողոք,** որոնցից քննության է առնվել **101-ը** կամ **58%**-ը: Քննության առնված բողոքների գերակշիռ մասը՝ **87**-ը, ներկայացվել են փաստաբանի վստահորդ (այդ թվում՝ նախկին վստահորդ)

[5] *թերի ներկայացված բողոքներ (անստորագիր, և.լ), կրկին ներկայացված բողոքներ, վստահորդ չհանդիսացող անձանց կողմից ներկայացված բողոքներ (Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.4 կետ)*

կամ փաստաբանի վստահորդի հակառակորդ կողմ հանդիսացող քաղաքացիների և կազմակերպությունների կողմից:

Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների և փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումների ընդհանուր վիճակագրական թվերի համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ փաստաբանների դեմ ներկայացված ընդհանուր **101 բողոքներից կարգապահական վարույթ հարուցվել է ընդամենը 42 բողոքի հիման վրա**, այսինքն՝ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել է քննված բողոքների ընդհանուր թվի **41,6%**-ը կազմող դեպքերում:

Փաստաբանների վստահորդների, քաղաքացիների և փաստաբանների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթները կազմում են փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների ընդհանուր թվի **90,5%-ը,** իսկ այլ բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթները կազմում են փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների ընդհանուր թվի **9,5%-ը:**

2025 թվականի հունվար-դեկտեմբեր (ներառյալ) ամիսների ընթացքում Փաստաբանների պալատում դատարաններից մուտքագրվել է փաստաբանների նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին 15 գրություն, որոնք ընդունվել են ի գիտություն:

2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՆՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

2025 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվել է քաղաքացիական **3 դատական գործ**, որից՝

2 գործ	1 գործ
Պալատի խորհրդի որոշումներով կարգապա-հական պատասխա-նատվության ենթարկված փաստաբան-ների կողմից Պալատի խորհրդի որոշումների վիճարկում	Փաստաբանի կողմից չվճարված տուգանքի գումարի բռնագանձման պահանջով գործեր (այդ թվում վճարման կարգադրություն) հայցվոր (դիմող) է հանդիսացել Պալատը:

2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՆՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

2025 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվել է վարչական 55 դատական գործ, որից՝

49 գործ	1 գործ	0 գործ	2 գործ	2 գործ	1 գործ
Պալատի խորհրդի/ Կարգապահական հանձնաժողովի որոշումներով կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանների կողմից Պալատի Հանձնաժողովի և Խորհրդի որոշումների վիճարկում	Պալատի խորհրդի այլ (կարգապահական պատասխանատվության հետ չկապված) որոշումների վիճարկում	Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումների վիճարկում	Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին Պալատի նախագահի որոշումների վիճարկում	Այլ հարցեր, օրինակ՝ Պալատի նախագահի այլ (կարգապահական պատասխանատվության հետ չկապված) որոշումների վիճարկում, որակավորման քննությունները չհանձնած հավակնորդի կողմից իր մասով որակավորման քննության արդյունքների վիճարկում	Այլ հարցեր, հայցվոր (դիմող) է հանդիսացել Պալատը

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԱԾ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

№	Արդյունքի չափորոշիչներ	Գործերի թիվը (հատ)		
		Նախորդ ժամանակա-	Հաշվետու ժամանակա -հատվածի	Ընդհանուր վարված

* ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.
Ներկայացված տեղեկատվությունը արտահանվել է «Էլեկտրոնային հանրային պաշտպան» ծրագրի միջոցով, իսկ հայտնաբերված անճշտությունները ենթարկվել են խմբագրության

		հատվածից փոխանցված	ընթացքում ստացված	
1	**Քրեական գործերի թիվը, որից.**	5831	18411	24242
1.1	Նախաքննությունում	1537	9057	10594
1.2	Առաջին ատյանի դատարանում	3823	8026	11849
1.3	Վերաքննիչ դատարանում	192	971	1163
1.4	Վճռաբեկ դատարանում	24	24	48
1.5	Հանձման գործերով	58	4	62
1.6	Տուժողի և այլ քրեական գործերով	197	329	526
1.7	**Բանավոր և գրավոր խորհրդատվություններով**			669
Ընդհանուր				24911
2	**Քաղաքացիական (վարչական և սահմանադրական) գործերի ընդհանուր թիվը, որից.**			1665
2.1	Սահմանադրական դատարանում	-	-	-
2.2	Առաջին ատյանի դատարանում, որից.	722	847	1569
2.2.1	քաղաքացիական (նաև սնանկության և հակակոռուպցիոն)	610	773	1383
2.2.2	վարչական	112	74	186
2.3	Վերաքննիչ դատարանում, որից.	21	75	96
2.3.1	քաղաքացիական (նաև սնանկության և հակակոռուպցիոն)	13	45	58
2.3.2	վարչական	8	30	38
2.4	Վճռաբեկ դատարանում	-	-	-
2.4.1	քաղաքացիական (նաև սնանկության և հակակոռուպցիոն)	-	-	-
2.4.2	վարչական	-	-	-
2.5	Բանավոր և գրավոր խորհրդատվություններով			5871
Ընդհանուր				7536
3	**Մերժված և դադարեցված դիմումների թիվը, որից.**			41
3.1	**Մերժված**			1
3.2	**Դադարեցված**			40
4	**Հանրային պաշտպանների դեմ բողոքների քանակը**			100
Ընդհանուր գործերի թիվը (1-ին և 2-րդ կետերի հանրագումարը)				32447

ՀՊԳ դիմած քաղաքացիներն՝ ըստ կատեգորիաների

N°	Կատեգորիայի անվանումը	«Փաստաբանության մասին» օրենքի հոդվածը, մասը և կետը	Քաղաքացիների թիվը
1	Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներ	41-5-1	140
2	1-ին և 2-րդ խմբի հաշմանդություն կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձինք	41-5-2	640
3	դատապարտյալներ	41-5-3	542
4	ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներ	41-5-4	1107
5	Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներ	41-5-5	332
6	գործազուրկներ	41-5-6	1642
7	միայնակ բնակվող կենսաթոշակառուներ	41-5-7	314
8	առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք	41-5-8	4
9	փախստականներ	41-5-9	211
10	Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներ	41-5-10	693
11	անվճարունակ այն ֆիզիկական անձինք, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում	41-5-11	1659

12	հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք	41-5-12	99
13	օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք	41-5-13	10
14	Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներ	41-5-14	235
15	խոշտանգումից տուժած անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով	41-5-15	0
16	«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձինք	41-5-16	14
17	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողներ	41-5-17	0
18	օտարերկրացիներ՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար	41-5-18	1
19	անձինք, որոնց վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթ	41-5-19	374
20	տուժողներ, եթե նրանք պարտադիր ժամկետային զինծառայող են կամ մինչև 16 տարեկան երեխա	41-5-20	8

Ա.Քրեական գործերի վիճակագրական տվյալները՝

Ժամանա-կահատված	***Գործերի քանակ***	***քրեաիրավ-վական***	***Գործերի աճ թվով***	***Գործերի աճ***	***Քրեաիրավական ուղղվածության մեկ***

		մասնա-գիտացմամբ հաստիքների քանակ	նախորդ տարվա համեմատ	տոկոսով նախորդ տարվա համեմատ	հաստիքին բաժին ընկնող գործերի քանակ
2014	3666	43	447	14%	85
2015	4600	43	934	25%	107
2016	5264	44	664	14%	120
2017	5891	44	627	12%	134
2018	6688	44	797	14%	152
2019	7183	43	495	7.5%	167
2020	7361	45	178	4%	163
2021	10492	45	3131	42%	233
2022	11117	53	625	6%	210
2023	15518	55[6]	4401	40%	282
2024	23910	70	8392	**54%**	**341**
2025	***24911***	**59**	**1001**	**4%**	**422**
2023	15518	55[7]	4401	40%	282
2024	23910	70	8392	**54%**	**341**
2025	***24911***	**59**	**1001**	**4%**	**422**

Բ. Քաղաքացիական, վարչական, սահմանադրական գործեր				
Ժամանակա-հատված	***Գործերի քանակ***	***ՀՊ հաստիքների ընդհանուր/մաս-նագիտացմամբ քանակ***	***Գործերի աճ թվով նախորդ տարվա համեմատ***	***Գործերի աճ տոկոսով նախորդ տարվա համեմատ***
2011[8]	12	32	-	-
2012	17	49	5	42%
2013	363	49	346	2035%
2014	1334[9]	49/6	971	267%
2015	2588	49/6	1254	94%
2016	4750	54/10	2162	84%
2017	5865	54/10	1115	23%

[6] Նոր հաստիք պետության կողմից չի տրամադրվել, սակայն հաշվի առնելով քրեական մասնագիտացմամբ հանրային պաշտպանների սաստիկ ծանրաբեռնվածությունը քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ 2 հաստիք փոփոխվել է քրեաիրավականի:

[7] Նոր հաստիք պետության կողմից չի տրամադրվել, սակայն հաշվի առնելով քրեական մասնագիտացմամբ հանրային պաշտպանների սաստիկ ծանրաբեռնվածությունը քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ 2 հաստիք փոփոխվել է քրեաիրավականի:

[8] 2011թ. միայն մի քանի քաղաքացիական գործերով էր նախատեսվում հանրային պաշտպան տրամադրել:

[9] Ներառում է նաև գրավոր և բանավոր խորհրդատվությունները:

2018	7021	54/10	1103	20%
2019	8608	54/11	1587	23%
2020	7926	59/14	-682	-8%
2021	8800	59/14	874	11%
2022	6947	69/16	-1853	-21%
2023	6033	69/14	-914	-13%
2024	7920	84/14	1887	31%
2025	7536	73/14	-384	-5%

Վիճակագրական տվյալները վկայում են, որ 2021 թվականին վարված 10,492 քրեական գործի դիմաց 2025 թվականին Գրասենյակը վարել է 24,911 գործ: Այսինքն՝ քրեական գործերի քանակն աճել է շուրջ 137 տոկոսով: Ընդհանուր առմամբ, Գրասենյակի կողմից վարած քրեական գործերի քանակն ավելացել է 14,419 գործով, մինչդեռ նշված ժամանակահատվածում (2024 թվականի համեմատությամբ) Գրասենյակին տրամադրված հաստիքների թիվը նվազել է 11-ով: